միության կողմից ձեռք բերված հովանոցները՝ իրենց տակդիրներով (7 տեղ, 1090 կգ
ընդհանուր քաշով, 44010 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը
կազմել են 5070 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007
թվականի մարտի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց
միության կողմից իրականացվող «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառու-
ցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-153-Ա որոշմամբ (2009 թվականի հոկտեմբերի
9-ի N Մ-704-Ա, 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-704-Ա, 2011 թվականի փետրվարի
18-ի N Մ-059-Ա, 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-523-Ա և 2012 թվականի փետրվարի 3-ի
N Մ-093-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 հունիսի 2012 թվականի N Մ-402-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 29-ի N 3/3.8-1/7060-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 24-ի N ԱԱ/3-4/5021-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղդամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին՝ N Մ-041-Ա որոշմամբ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հորիզոն - 95» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801721) 2012 թվականի մարտի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կենտրոնատեղիի կառուցման կարկասային շինարարական աշխատանքների իրականացում՝ 477903130 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 հունիսի 2012 թվականի N Մ-403-Ա
քաղ. երևան**

**«ՎՈՐԼՂ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱ-
ԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՆԱԶՃՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՅՎՈՂ
«ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՄԱՐՄԱՇԵՆ ՈՒ ՀՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂԵՐԻ 600 ԵՐԵՒԱ-
ՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2012 թվականի հունիսի 7-ի N 3/3.8-1/7588-12, Հայաստանի Հանրապետության արդարադա-
րության նախարարության 2012 թվականի հունիսի 6-ի N 02/3409-12, Հայաստանի Հանրապետու-
թյան աշխարանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի հունիսի 6-ի N 77-12,
Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի
2012 թվականի հունիսի 4-ի N ԱԱ/3-45580/-12 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ-
պետի 2012 թվականի հունիսի 1-ի N 01/2428-12 եզրակացությունները, որոշում է.


1. Բարեգործական որակել «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (<<Քաղ. երևան, Ռոմանոս
Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 30 մլն դրամ ընդհանուր արժողությամբ
«Ամառային ճամբար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի և
Մարմաշեն ու Հովունի գյուղերի 600 երեխաների համար» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում
մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի
պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործա-
կան ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի
հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված
ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը
մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից
հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական
եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
 «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
 կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի
 տնօրեն Գրախան Սթրոնգի կողմից
 «21» 05 2012թ

«Ամառային ճամբար Շիրակի մարզի Գյումրի քաղաքի և Մարմաշեն ու Հովունի գյուղերի 600 երեխաների համար»

ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	Շիրակի մարզի Գյումրի քաղաքի (Անի, Մուշ-2, Շերամ, Ավստրիական քաղամասեր) և Մարմաշեն ու Հովունի գյուղերի 9-11 տարեկան երեխաներին ֆիզիկական և մշակութային հանգստի ապահովում ամառային ճամբարում:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3	Բարեգործը	Վորլդ Վիժն ԱՄՆ գրասենյակ, հասցե՝ 34834 Վեբերուգեր Վեյ Սաութ, Ֆեդերալ Վեյ, ՎԱ 98001, ԱՄՆ, հեռախոս՝ 1-888-511-6548
4	Ծրագիրը կատարողը	Ծրագիրն անմիջականորեն կատարողն է հանդիսանում Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը (հասցե՝ Երևան, Ռոմանոս Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755):
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրը՝ Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Մարմաշեն և Հովունի գյուղեր:
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 30 000 000 դրամ
7	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացող են հանդիսանում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Գյումրիի Տարածքային Չարագացման Ծրագրի <Երեխաների Աջակցության> ծրագրում գրանցված / Գյումրի քաղաքի Անի, Մուշ-2, Շերամ, Ավստրիական քաղամասերի, Մարմաշեն և Հովունի գյուղերի սոցիալապես անապահով ընտանիքների 2001 - 2003 թվականին ծնված 600 երեխաները:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	17 Ապրիլ 2012 - 27 օգոստոս 2012

9	Իրականացման ժամկետը	Միջոցառումների նկարագրությունը	Ժամկետները	անհրաժեշտ ֆինանս. միջոցներ
	Ծրագրի իրականացման ժամկետը	Երեխաների ցուցակների ճշտում	17 ապրիլ 2012-11 մայիս 2012	չի պահանջվում
	Ծրագրի իրականացման ժամկետը	600 երեխայի համար 4 հերթափոխով ամառային ճամբարի աշխատանքներն իրականացնող կազմակերպության ընտրություն և պայմանագրի կնքում	12 մայիս 2012-10 հունիս 2012	չի պահանջվում
	Ծրագրի իրականացման ժամկետը	Ծնողների հետ համաձայնագրերի կնքում	12 հունիս 2012-22 հունիս 2012	չի պահանջվում
	Ծրագրի իրականացման ժամկետը	Ամառային ճամբարի անցկացում (ճամբարային 4 հերթափոխ՝ յուրաքանչյուրը 10 օր, 150 երեխայի համար)	09 հուլիս 2012-27 օգոստոս 2012	30 000 000 դրամ
10	Զեռք բերվող (ներմուծվող) արդյունքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծախսերը և նախատեսվող զինը	Ծրագրի շրջանակներում մախօրթը ընտրված կազմակերպության հետ կնքվի համապատասխան պայմանագիր ամառային ճամբարի կազմակերպման համար (4 հերթով յուրաքանչյուր հերթը 10 օր, 150 երեխայի համար): Գործարքի մոտավոր արժեքը կկազմի 30 000 000 դրամ, որի համար ակնկալվում է գործարքի շրջանակներում ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում:		
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:		
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը ծրագիրն իրականացնելու է ՀՀ Շիրակի մարզպետարանի հետ համագործակցությամբ:		
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունը կիրականացվի «Վորլդ Վիժն» Հայաստանի կենտրոնական գրասենյակի և վերջինիս Գյումրիի Տարածքային Չարագացման Ծրագրի գրասենյակի կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:		

Գրախան Սթրոնգ

21.05.12թ

2012



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 հունիսի 2012 թվականի N Մ-404-Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՅԻԱ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 7-ի N 3/3.8-2/7577-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի հունիսի 1-ի N ՀՔ/22/5497-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 1-ի N ԱԱ/3-6/5472-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի «Հայ-ֆրանսիական առողջապահական շարժում» բարեգործական կազմակերպության կողմից որպես օժանդակություն Գորիսի նորակառույց սրտաբանական կենտրոնի համար «Հայ-ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված գույքի և սարքավորումների (12 տեղ, 4390 կգ ընդհանուր քաշով, 35500 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2000 եվրո, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայ-ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 հունիսի 2012 թվականի N Մ-405-Ա
քաղ. երևան

**«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 6-ի N 3/3.8-2/7518-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի հունիսի 6-ի N 03/07-1/5931-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 1-ի N ԱԱ/3-6/5473-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված դպրոցական կահույքի (ուսուցչի և աշակերտական սեղաններ ու աթոռներ՝ 225 տեղ, 4015 կգ ընդհանուր քաշով, 21557 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 6859 եվրո ու գրատախտակներ՝ մեկ տեղ, 450 կգ ընդհանուր քաշով, 5835 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 735 եվրո, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծման և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Լեռնահովիտի Սարգիս Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին նվիրատվության ծրագիրը:

2. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 հունիսի 2012 թվականի N Մ-406-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-941-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՈՒՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 7-ի N 3/3.8-2/7589-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի հունիսի 6-ի N 76-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 1-ի N ԱԱ/3-6/5469-12 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված ստորև նշված ապրանքները (բաշխման ցանկերը կցվում են) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-941-Ա որոշմամբ (2011 թվականի հունիսի 6-ի N Մ-353-Ա, 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-853-Ա և 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-088-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում՝


1) սպազետի՝ 2000 տեղ, 20340 կգ ընդհանուր քաշով, 45200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ.

2) բրինձ՝ 700 տեղ, 14060 կգ ընդհանուր քաշով, 28360 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 5400 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ.

3) արևածաղկի յուղ՝ 2840 տեղ, 20107 կգ ընդհանուր քաշով, 70534 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ.

4) արևածաղկի յուղ՝ 1700 տեղ, 19550 կգ ընդհանուր քաշով, 64408 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի ու Տավուշի մարզպետներին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


ԻՇԽՐ ԲԱՇԽՄԱՆ ԳՐԱՆԿ

ինվոյս 0826 22.03.2012թ.

N N	Ապրանքի անվանումը	Տեղերի քանակը	Քանակը	Քաշը մետրո /կգ/	Քաշը բրուտոտո /կգ/	Արժեքը ֆրանկ	Հաճառուները ըստ մարզերի	Հաճառուների քանակը	Արժեքը ըստ փաթեթների /դրամ /
1	Մակարոն	փաթեթ	2000				Գեղարքունիքի մարզ 814 փաթեթ	Գետիկ 74 Այգուտ 164 Մարտունի 73 Ղարաբակ 81 Վահան 188 Կալական 23 Բարեպատ 6 Չորականք 31 Անտառամեջ 22 Գավառ 61 Թթուջուր 81	772 1,710 761 845 1,960 240 63 323 229 636 845
							Արմավիրի մարզ 51 փաթեթ	Արտաշատ 51	532
							Արարատի մարզ 88 փաթեթ	Վեդի 17 Արտաշատ 16 Գետազատ 39 Մրգանուշ 16	177 167 407 167
							Կոտայքի մարզ 111 փաթեթ	Չարենցավան 13 Սևաբերդ 41 Չորաղբյուր 18 Աբովյան 38	136 427 188 396
							Լոռու մարզ 48 փաթեթ	Վանաձոր 48	500
							Տավուշի մարզ 33 փաթեթ	Ղիլիջան 15 Իջևան 18	156 188
							Երևան քաղաքի շահառուներին բաշխելու համար	3201	33,376
	Ընդամենը			20,006 կգ	20,340 կգ	2800 ԱՄՆ դոլար 8/6 (45200 ԱՄՆ դոլարը բեռի արժեքն է)		4335	45,200

«Ղիակունիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն

Հ. Ղազարյան



01.8/8.10


ԲԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԳՐԱՆԿ

ինվոյս 0827 22.03.2012թ.

N N	Ապրանքի անվանումը	Տեղերի քանակը	Քանակը	Քաշը մետրո /կգ/	Քաշը բրուտոտո /կգ/	Արժեքը ֆրանկ	Հաճառուները ըստ մարզերի	Հաճառուների քանակը	Արժեքը ըստ փաթեթների /դրամ /
2	Բուսական յուղ	փաթեթ	2840				Գեղարքունիքի մարզ 814 փաթեթ	Գետիկ 74 Այգուտ 164 Մարտունի 73 Ղարաբակ 81 Վահան 188 Կալական 23 Բարեպատ 6 Չորականք 31 Անտառամեջ 22 Գավառ 61 Թթուջուր 81	1,204 2,668 1,188 1,318 3,059 374 98 504 358 993 1,318
							Արմավիրի մարզ 51 փաթեթ	Արտաշատ 51	830
							Արարատի մարզ 88 փաթեթ	Վեդի 17 Արտաշատ 16 Գետազատ 39 Մրգանուշ 16	277 260 635 260
							Կոտայքի մարզ 111 փաթեթ	Չարենցավան 13 Սևաբերդ 41 Չորաղբյուր 18 Աբովյան 38	212 667 293 618
							Լոռու մարզ 48 փաթեթ	Վանաձոր 48	781
							Տավուշի մարզ 33 փաթեթ	Ղիլիջան 15 Իջևան 18	244 293
							Երևան քաղաքի շահառուներին բաշխելու համար	3201	52,083
	Ընդամենը			17,253 կգ	20,107 կգ	2800 ԱՄՆ դոլար 8/6 (70534 ԱՄՆ դոլարը բեռի արժեքն է)		4335	70,534

«Ղիակունիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն

Հ. Ղազարյան



01.8/8.10


Բեռի բաշխման ցանկ

ինվոյս 0828 22.03.2012թ.

N N	Ապրանքի անվանումը	Տեղերի քանակը	Քանակը	Քաշը ճեղքառ /կգ/	Քաշը բրուտտո /կգ/	Արժեքը ֆրանկ	Հաճառուները ըստ մարզերի	Հաճառուների քանակը	Արժեքը ըստ փաթեթների /դրամ /
3	Բրինձ	պարկ	700				Գեղարքունիքի մարզ 814 փաթեթ	Գետիկ 74 Ազուր 164 Մարտունի 73 Ղարաբակ 81 Վահան 188 Կալավան 23 Բարեպատ 6 Չորական 31 Անտառամեջ 22 Գավառ 61 Թբուշուր 81	484 1,073 478 530 1,230 150 39 203 144 399 530
							Արմավիրի մարզ 51 փաթեթ	Արտաշատ 17	334
							Արարատի մարզ 88 փաթեթ	Արտաշատ 16 Գետազատ 39 Մրգանուշ 16	111 105 255 105
							Կոտայքի մարզ 111 փաթեթ	Չարենցավան 13 Սևաբերդ 41 Չորադրյուր 18 Արուսյան 38	85 268 118 249
							Լոռու մարզ 48 փաթեթ	Վանաձոր 48	314
							Տավուշի մարզ 33 փաթեթ	Ղիլիջան 15 Իջևան 18	98 118
							Երևան քաղաքի շահառուներին բաշխելու համար		3201
	Ընդամենը			14,000 կգ	14,060 կգ	5400 ԱՄՆ դոլար 8/8 (28360 ԱՄՆ դոլար 8/8 արժեքն է)		4335	28,360

«Ղիակունիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն

Հ. Ղազարյան



21.8.10


Բեռի բաշխման ցանկ

ինվոյս 01188 03.05.2012թ.

N N	Ապրանքի անվանումը	Տեղերի քանակը	Քանակը	Քաշը ճեղքառ /կգ/	Քաշը բրուտտո /կգ/	Արժեքը ֆրանկ	Հաճառուները ըստ մարզերի	Հաճառուների քանակը	Արժեքը ըստ փաթեթների /դրամ /
1	Արևածաղկի ձեթ	փաթեթ	1700				Գեղարքունիքի մարզ 814 փաթեթ	Գետիկ 74 Ազուր 164 Մարտունի 73 Ղարաբակ 81 Վահան 188 Կալավան 23 Բարեպատ 6 Չորական 31 Անտառամեջ 22 Գավառ 61 Թբուշուր 81	1,099 2,437 1,085 1,203 2,793 342 89 461 327 906 1,203
							Արմավիրի մարզ 51 փաթեթ	Արտաշատ 17	758
							Արարատի մարզ 88 փաթեթ	Արտաշատ 16 Գետազատ 39 Մրգանուշ 16	253 238 579 238
							Կոտայքի մարզ 111 փաթեթ	Չարենցավան 13 Սևաբերդ 41 Չորադրյուր 18 Արուսյան 38	193 609 267 565
							Լոռու մարզ 48 փաթեթ	Վանաձոր 48	713
							Տավուշի մարզ 33 փաթեթ	Ղիլիջան 15 Իջևան 18	223 267
							Երևան քաղաքի շահառուներին բաշխելու համար		3201
	Ընդամենը			19550 կգ	19550 կգ	2800 ԱՄՆ դոլար 8/8 (64408 ԱՄՆ դոլար 8/8 արժեքն է)		4335	64,408

«Ղիակունիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն

Հ. Ղազարյան



21.8.10



**8 հունիսի 2012 թվականի N Մ-407-Ա
քաղ. երևան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-565-Ս ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՈՒԻ ՆԵՐՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 12-ի N 3/3.8-2/4693-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 11-ի N ԱԱ/3-6/3096-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգման, վերակառուցման և պահպանման» ծրագրի մասին» N Մ-565-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «266227500 դրամ» բառերը փոխարինել «324644500 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը կարդալ նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Սեմ և Սիլվա Սիմոնյան» հիմնադրամի կողմից «Սիմոնյան» կրթական հիմնադրամի հասցեով ուղարկված բեռը (11 տեղ, 5655 կգ ընդհանուր քաշով, 51973.92 ԱՄՆ-ի դոլարին համարժեք ծախսով արժույթայամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6735.10 ԱՄՆ-ի դոլար, չափազանցվում է «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն լուծման ուղղակի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, մարմնավորող Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների նյութը:

254

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Twenty four


~~For this~~

Ստորագրողը՝ Լու. Օսանյան
Մանկավարժական կոլեջի
Հոգաբարձուհի
ՀՀ Կոմիտասի 2012թ.

Հովանենք Թուվանյանի անվան զբոսայգու
վերանորոգման, վերակառուցման և պահպանման
ծրագիր


1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է վերանորոգել, վերակառուցել և պահպանել Հովհաննես Թումանյանի անվան գրոսայգու տարածքը այն դարձնելով հանգստի և ժամանցի գոտի Երևանի քաղաքային համայնքի բնակիչների համար: Մասնավորապես նախատեսվում է կառուցել համրային օգտագործման սանհանգույց, ֆուտբոլի և բասկետբոլի խաղահրապարակներ, հեռիտուն ճանապարհներ, տաղավարներ և այլն:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հայրերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3.	Բարեգործը	Ծրագիրը իրականացվելու է Սեմ և Միլկա Միմոնյան» հիմնադրամի միջոցներով (պետական գրանցման համար 801422035 գրանցված 05.05.2011թ. ԱՄՆ-Տեխաս նահանգի քաղաքացիության կրթից)
4.	Ծրագիրը կատարողը	Ծրագիրը իրականացվելու է Միմոնյան կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ 01245672, ՀՀ ք.Երևան, գրանցման թիվ 222.160.01143, վկայական 03Ա086142)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրը իրականացվելու է ՀՀ Երևան քաղաքի Հայաբլրյան փողոցին հարող Հովհաննես Թումանյանի անվան գրոսայգու տարածքում: Ծրագիրը բնորոշվում է, որի շրջանակներում բարեկարգվելու, վերանորոգվելու և վերակառուցվելու է այգու տարածքը, ներառյալ՝ կանաչ գոտիները, հեռիտուն ճանապարհները, լուսավորության համակարգը, որոշման համակարգը, ավտոկառավարողները:


Ln. 8/8.11

	11.8/8.11	նստարանները: Այգու տարածքը մշտապես բարեկարգ պահելու նպատակներից ելնելով, իրականացվելու է աղբահանության, սանիտարական հատումների, պահպանության գործողություններ, ոռոգման աշխատանքներ: Ծրագրի իրականացման արդյունքում բարեկարգ այգին ծառայելու է հանրությանը, համայնքին և վարչական շրջանի բնակչությանը և լուծելու է վարչական շրջանում հանգստի և ժամանցի կազմակերպման հարցերը:
6.	Ծրագրի բյուջեն 	Ծրագրի ֆինանսավորումը կատարվելու է «Մեմ և Սիլվա Սիմոնյան» հիմնադրամի կողմից Սիմոնյան կրթական հիմնադրամին հատկացված ֆինանսական միջոցներով: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 324644500 (երեք հարյուր քսանչորս միլիոն վեց հարյուր քառասունչորս հազար հինգ հարյուր) դրամ: Դրանք օգտագործվելու են սույն ծրագրի հաստատումից հետո երեք տարվա ընթացքում, ըստ ծրագրվող աշխատանքների ընթացքի և հերթականության: Կատարման ենթակա ծախսերի մախատեսվող ուղղությունները, չափերը և ժամկետները՝ 1. Հանրային օգտագործման սանհանգույցի կառուցում – 18375000 դրամ, մախատեսվում է ավարտել մինչև 2012թ-ի ավարտը 2. Էլեկտրական ենթակայանի կառուցում – 19062500 դրամ, մախատեսվում է ավարտել մինչև 2011թ-ի ավարտը 3. Բասկետբոլի և ֆուտբոլի դաշտի կառուցում – 86036750 դրամ, մախատեսվում է ավարտել մինչև 2012թ-ի ավարտը 4. Այգու այլ ենթակառուցվածքների կառուցում և վերանորոգում (լուսավորություն, ցուցանակներ, կայանատեղի, հետիոտն ճանապարհներ, տաղավարներ, ծառեր, քիեր, նստարաններ, սեղաններ և այլն) - 74765250 դրամ, Նախատեսվում է ավարտել մինչև 2012թ-ի ավարտը 5. Թումանյանի անվան զբոսայգու պահպանության համար կատարվող ընթացիկ ծախսեր 126405000 դրամ, Նախատեսվում է ավարտել մինչև 2014թ-ի հունիսի 30-ը:

7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքային համայնքը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը իրականացվելու երեք փուլով՝ 2011թ-ի հուլիսի 1-ից մինչև 2014թ-ի հունիսի 30-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը 11.8/8.11	Ծրագրի շրջանակներում իրականացվելու են հետևյալ միջոցառումները ըստ փուլերի՝ 1-ին Փուլ՝ 2011թ-ի հուլիսի 1-ից մինչև 2012թ-ի դեկտեմբերի 31 1. Հանրային օգտագործման սանհանգույցի կառուցում • Հողային աշխատանքների իրականացում - 1875000 դրամ, մախատեսվում է ավարտել մինչև 2012թ-ի ավարտը • Շինարարական նյութերի և աշխատանքների ձեռք բերում – 13875000 դրամ, մախատեսվում է ավարտել մինչև 2012թ-ի ավարտը • Ջրային համակարգերի ձեռք բերում և տեղադրում – 2625000 դրամ, մախատեսվում է ավարտել մինչև 2012թ-ի ավարտը 2. Ենթակայանի կառուցում • Շինարարական նյութերի և աշխատանքների ձեռք բերում – 12125000 դրամ, մախատեսվում է ավարտել մինչև 2011թ-ի ավարտը • Էլեկտրական սարքավորումների ձեռք բերում և տեղադրում – 6937500 դրամ, մախատեսվում է ավարտել մինչև 2011թ-ի ավարտը 3. Բասկետբոլի և ֆուտբոլի դաշտերի կառուցում • Հողային աշխատանքների իրականացում – 11250000 դրամ, մախատեսվում է ավարտել մինչև 2012թ-ի ավարտը

11.8.11	• Շինարարական նյութերի և աշխատանքների ձեռք բերում – 52500000 դրամ, նախատեսվում է ավարտել մինչև 2012թ-ի ավարտը • Դաշտերի համար անհրաժեշտ հարմարանքների ձեռք բերում և տեղադրում – 22286750 դրամ, նախատեսվում է ավարտել մինչև 2012թ-ի ավարտը 2-րդ Փուլ՝ 2011թ-ի հուլիսի 1-ից մինչև 2012թ-ի դեկտեմբերի 31 1. Այգու այլ ենթակառուցվածքների կառուցում և վերանորոգում (լուսավորություն, ցուցանակներ, կայանատեղի, հետիոտն ճանապարհներ, տաղավարներ, ծառեր, թփեր, մատարաններ, սեղաններ և այլն) • Հետիոտն ճանապարհների կառուցում – 16312500 դրամ, նախատեսվում է ավարտել մինչև 2012թ-ի դեկտեմբերի 31-ը • Այգու լուսավորության համար անհրաժեշտ նյութերի և սարքավորումների ձեռք բերում – 3750000 դրամ, նախատեսվում է ավարտել մինչև 2012թ-ի դեկտեմբերի 31-ը • Ավտոմեքենաների կայանատեղի կառուցում – 2625000 դրամ, նախատեսվում է ավարտել մինչև 2012թ-ի դեկտեմբերի 31-ը • Տաղավարների ձեռք բերում և տեղադրում – 3937500 դրամ, նախատեսվում է ավարտել մինչև 2012թ-ի դեկտեմբերի 31-ը • Ծառերի և թփերի ձեռք բերում – 7500000 դրամ, նախատեսվում է ավարտել մինչև 2012թ-ի դեկտեմբերի 31-ը • Ցուցանակների պատրաստում և տեղադրում – 750000 դրամ, նախատեսվում է ավարտել մինչև 2012թ-ի դեկտեմբերի 31-ը • Այլ ենթակառուցվածքների համար անհրաժեշտ նյութերի, սարքավորումների և աշխատանքների ձեռք բերում – 39890250 դրամ, նախատեսվում է ավարտել մինչև 2012թ-ի դեկտեմբերի 31-ը
----------------	--

11.8.11 	3-րդ Փուլ՝ 2011թ-ի հուլիսի 1-ից մինչև 2014թ-ի հունիսի 30 1. Թումանյանի անվան զբոսայգու ընթացիկ ծախսեր իրականացում • Այգու անձնակազմի վարձատրության ծախսեր – 45000000 դրամ, նախատեսվում է ավարտել մինչև 2014թ-ի հունիսի 30-ը • Պահնորդային ծառայությունների ձեռք բերում – 28125000 դրամ, նախատեսվում է ավարտել մինչև 2014թ-ի հունիսի 30-ը • Ենթավարձակալական վճարների վճարում – 33750000 դրամ, նախատեսվում է ավարտել մինչև 2014թ-ի հունիսի 30-ը • Այլ ծախսեր – 19530000 դրամ, նախատեսվում է ավարտել մինչև 2014թ-ի հունիսի 30-ը
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակում նախատեսվում է ձեռք բերել (ներմուծել) հետևյալ ապրանքները և ծառայությունները. • Հողային աշխատանքների ձեռք բերում – 13125000 դրամ, նախատեսվում է ձեռք բերել ՀՀ տարածքից մինչև 2012թ-ի դեկտեմբերի 31-ը: • Շինարարական աշխատանքների և նյութերի ձեռք բերում – 97812500 դրամ, նախատեսվում է ձեռք բերել ՀՀ տարածքից մինչև 2012թ-ի դեկտեմբերի 31-ը: • Ջրամատակարարման համակարգի մոնտաժման համար անհրաժեշտ նյութերի և աշխատանքների ձեռք բերում – 2025000, նախատեսվում է ձեռք բերել ՀՀ տարածքից մինչև 2012թ-ի դեկտեմբերի 31-ը: • Հանրային սանհանգույցի, ֆուտբոլի և բասկետբոլի դաշտերի հարմարանքների ձեռք բերում – 24343250 դրամ, նախատեսվում է ձեռք բերել արտերկրից մինչև 2012թ-ի դեկտեմբերի 31-ը:

11.8/8.11 	• Էլեկտրական ապրաքների և սարքավորումների ձեռք բերում – 4500000 դրամ, նախատեսվում է ձեռք բերել արտերկրից մինչև 2012թ-ի դեկտեմբերի 31-ը: • Էլեկտրական ապրաքների և սարքավորումների ձեռք բերում – 3562500 դրամ, նախատեսվում է ձեռք բերել ՀՀ տարածքից մինչև 2012թ-ի դեկտեմբերի 31-ը: • Կանաչապատման պարագաների (ծառեր, քփեր, խոտի սերմեր և այլն) ձեռք բերում – 8293500 դրամ, նախատեսվում է ձեռք բերել արտերկրից մինչև 2012թ-ի հունիսի 30-ը: • Այգու համար տաղավարների ձեռք բերում - 3937500 դրամ, նախատեսվում է ձեռք բերել արտերկրից մինչև 2012թ-ի դեկտեմբերի 31-ը: • Այգու համար ցուցափեղկերի պատրաստում – 750000 դրամ, նախատեսվում է ձեռք բերել ՀՀ տարածքից մինչև 2012թ-ի դեկտեմբերի 31-ը: • Այգու այլ ենթակառուցվածքների կառուցման համար անհրաճեշտ հարմարանքների, սարքավորումների և նյութերի ձեռք բերում – 39890250 դրամ, նախատեսվում է ձեռք բերել արտերկրից մինչև 2012թ-ի դեկտեմբերի 31-ը: • Այգու պահնորդային ծառայության ձեռք բերում – 28125000 դրամ, նախատեսվում է ձեռք բերել ՀՀ տարածքից մինչև 2014թ-ի հունիսի 30-ը: • Այգու ենթավարձակալական վճարների վճարում – 33750000 դրամ, նախատեսվում է ձեռք բերել ՀՀ տարածքից մինչև 2014թ-ի հունիսի 30-ը: • Այգու կոմունալ վճարների վճարում (էլեկտրոէներգիա, ոռոգման ջրի և այլն) - 3375000 դրամ, նախատեսվում է ձեռք բերել ՀՀ տարածքից մինչև 2014թ-ի հունիսի 30-ը:
--	---

11.8/8.11	տարածքից մինչև 2014թ-ի հունիսի 30-ը: • Կանաչապատման պարագաների (ծառեր, քփեր, խոտի սերմեր և այլն) ձեռք բերում – 5625000 դրամ, նախատեսվում է ձեռք բերել ՀՀ տարածքից մինչև 2014թ-ի հունիսի 30-ը: • Այլ պրանքների և ծառայությունների ձեռք բերում – 10530000 դրամ, նախատեսվում է ձեռք բերել ՀՀ տարածքից մինչև 2014թ-ի հունիսի 30-ը: • Այգում աշխատող անձնակազմի աշխատավարձ և սոց վճար - 45000000 դրամ, նախատեսվում է ձեռք բերել ՀՀ տարածքից մինչև 2014թ-ի հունիսի 30-ը:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն կատարվելու:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը իրականացվելու է Երևան համայնքի հետ համագործակցությամբ:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման ընթացքի և ավարտի վերաբերյալ սահմանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը՝ հաշվետվությունների տեսքով, իսկ կատարված վերանորոգման աշխատանքների արդյունքների ընդունելու առումով՝ Երևան համայնքի կողմից:

Կազմեց՝ Արամ Նարինյան

2022

С 8515 առ 26.03.2012թ-ի հայտարարագրով ժամանակավոր



ներմուծված ապրանքների ցանկ

20.8/8.11

Անվանում	Չափման միավոր	Քանակ	Ընդհանույր արժեք/ ԱՄՆ դոլար
Հավաքովի պլ. զուգարանապատեր	Լրակազմ	1	4090
Կախիչ	Հատ	8	252
Ձեռքի չորացնող սարք	Հատ	2	590
Լոգարանի մետաղական կախիչ և հեղուկ օճառի աման	Հատ	5	139
Լոգարանի սրբիչի մետաղական կախիչ	Հատ	1	42
Լուսարձակներ/ քանդված վիճակում	Լրակազմ	24	8074.28
Աղբամաններ	Լրակազմ	5	1836
Մետաղական հիմքով նստարաններ	Լրակազմ	37, որից 5-ը սեղաններով	19863.9
Մետաղական ցայտաղբյուր	Լրակազմ	2 կոմպլեկտ	6712.2
Պլ. սիֆոն	Հատ	10 հատ	124.3
Պղնձյա հաղորդալար	Ֆուտ	1000ֆ	420
Պլ. կցամասեր	Հատ	270 հատ	159.5
Տուփեր ոռոգման համար	Հատ	40	948.98
Դիտահորեր ոռոգման համար	Լրակազմ	2	

Ջուր սառեցնող սարք	Հատ	2	1146
Մետաղական լվացարան	Հատ	2	1132
Մետաղական զուգարանակոնք	Հատ	6	5302
սիֆոններ	Լրակազմ	6	
Խառնիչային ծորակ	Հատ	1	67
Ռետինե թևկապեր	Հատ	37	296
Էլ. լուսատուներ	Լրակազմ	5	480
Սոսիմ	Գալոն	8	298.76
Ընդամենը			51973.92

Սիմոնյան Կրթական Հիմնադրամի տնօրեն՝



Մարի Լու Փափազյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 հունիսի 2012 թվականի N Մ-408-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի N Մ-130-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2012 թվականի հունիսի 1-ի N 3/3.8-1/7228-12 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 31-ի N ԱԱ/3-4/5409-12
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմա-
կերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված
պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2012 թվականի փետրվարի 29-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգոր-
ծական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Կապեր
եկեղեցու և կառավարության հետ» ծրագրի մասին» N Մ-130-Ա որոշմամբ հաստատված
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն գզալի նշանակություն՝

1) «Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505322) 2012
թվականի մայիսի 11-ին կնքված՝ N WVA/CC/PR-12/001 պայմանագրում նշված գործարքը,
որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 4200000 դրամի
չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Արև Եդիգարյան» ԱԶ-ի հետ (ՀՎՀՀ՝ 79809856) 2012 թվականի մայիսի 17-ին
կնքված՝ N WVA/CC-ALAV, SIS, KAP ADPs/SBAA-12/001 LOT 2 պայմանագրում նշված գոր-
ծարքը, որով նախատեսվում է մեղվաընտանիքների և հարակից ապրանքների մատա-
կարարում՝ 2654900 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ

**15 հունիսի 2012 թվականի N Մ-409-Ա
(Որոշումն ընդունվել է 2012 թվականի հունիսի 8-ին)
քաղ. երևան**

**«ՎՈՐՈՂ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԻՆԱՆՅՈՒԹԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆ-
ՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՆՏԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ, ԱՓՆԱ, ՀԱՐԹԱՎԱՆ,
ՔՈՒԶԱԿ ԵՎ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փարաձքային կառավարման նախարարության 2012 թվականի հունիսի 11-ի N 07/16/2976-12, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 8-ի N 3/3.8-1/7663-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հունիսի 12-ի N 02/3535-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի հունիսի 12-ի N 03/07-1/6132-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 7-ի N ԱԱ/3-4/5799-12 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2012 թվականի հունիսի 8-ի N 01/14.2/1872-12 եզրակացությունները, **որոշում է.**

1. Բարեգործական որակել «Վորոլ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 9535910 դրամ ընդհանուր արժողությամբ «Շինանյութի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան, Ափնա, Հարթավան, Քուչակ և Շենավան համայնքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորոլ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արաման սթոուն սթայլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08207707) 2012 թվականի մայիսի 8-ին կնքված՝ N WVA/APAR ADP/CM-12/002 պայմանագրում նշված գործարքը, որով նախա-

տեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 9535910 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորոլ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է՝
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Տնօրենի, Տնօրենի ժ/պ
Շաղիկ Մարուխյան
Հունիսի 14, 2012թ.

«Շինանյութի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ապարան, Ափնա, Հարթավան, Քուչակ և Շենավան համայնքներին»

ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	Բարելավել Ապարանի տարածաշրջանի Ապարան քաղաքի մանկապատանեկան մարզադպրոցի, Ափնա համայնքի միջնակարգ դպրոցի, Հարթավան համայնքի միջնակարգ դպրոցի, Քուչակ համայնքի գյուղապետարանում գործող խմբակի և Շենավան համայնքի միջնակարգ դպրոցի ենթակառուցվածքների վիճակը:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3	Բարեգործը	«Վորլդ Վիժն Թայվան» աջակցող գրասենյակ Հասցե՝ World Vision Taiwan, 6F, 133, Sec.4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan (R.O.C.)
4	Ծրագիրը կատարողը	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ Հասցե՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան 1, ՀՎՀՀ 02528755
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արագածոտն մարզի Ապարան, Ափնա, Հարթավան, Քուչակ և Շենավան համայնքներում: Բնագավառը՝ կրթական
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 9 535 910 դրամ:
7	Բարեգործություն ստացողը	Արագածոտն մարզի Ապարան քաղաքի մանկապատանեկան մարզադպրոցը, Ափնա համայնքի միջնակարգ դպրոցը, Հարթավան համայնքի միջնակարգ դպրոցը, Քուչակ համայնքի գյուղապետարանում գործող խմբակը և Շենավան համայնքի միջնակարգ դպրոցը:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	Հունիսի 18 – Օգոստոսի 31, 2012թ.

9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում, սույն թվականի Հունիս-Օգոստոս ամիսներին մատակարարվելու է շինանյութ ստորև ներկայացված աղյուսակին համապատասխան.			
		N	Ծրագրերի անվանումը	Ժամկետները	Անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը
		1.	Շինանյութի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ապարան քաղաքի մանկապատանեկան մարզադպրոցի մասնակի վերանորոգման, Ափնա համայնքի միջնակարգ դպրոցի սանհանգույցի վերանորոգման, Հարթավան համայնքի միջնակարգ դպրոցի տանիքի վերանորոգման, Քուչակ համայնքի գյուղապետարանի առաջին հարկում պարային խմբակի համար նախատեսված սենյակի վերանորոգման և Շենավան համայնքի միջնակարգ դպրոցի տանիքի և մարզադահլիճի սանհանգույցի վերանորոգման համար:	Հունիս – Օգոստոս, 2012թ.	9 535 910
		2.	Ընդամենը:		9 535 910
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	N			
		Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը		Ձեռք բերվող ծավալները	Նախատեսվող գինը
		1.	Շինանյութի մատակարարում՝ պրոֆիլավոր և հարթ թիթեղ, փայտյա չորտուներ և տախտակներ, ցեմենտ, ներկ, մետաղապլաստե դռներ և պատուհաններ, մետաղական դուռ և այլ անհրաժեշտ ապրանքներ, Ապարանի մանկապատանեկան մարզադպրոց ՊՈԱԿ-ի տանիքի, պատուհանների և ներքին հարդարման և վերանորոգման աշխատանքները իրականացնելու համար:	Վերանորոգման նախահաշիվ՝ Հավելված 1	5 583 776
		2.	Շինանյութի մատակարարում՝ մետաղապլաստե դռներ և պատուհաններ, ցեմենտ, պեմզաբլոկ, ներկ, հաղորդալար, ջրի խողովակներ, գուգարանակոնք, լվացարան, փականներ և այլ անհրաժեշտ ապրանքներ,	Վերանորոգման նախահաշիվ՝ Հավելված 1	683 726


		Ափնա համայնքի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի երեխաների համար նախատեսված սանհանգույցի ամբողջովին վերանորոգման աշխատանքները իրականացնելու համար:		
		3. Շինանյութի մատակարարում՝ պրոֆիլավոր և հարթ թիթեղ և փայտյա չորսուներ, Հարթավան համայնքի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի տանիքի վերանորոգման աշխատանքները իրականացնելու համար:	Վերանորոգման նախահաշիվ Հավելված 1	709 258
		4. Շինանյութի մատակարարում՝ ցեմենտ, գաջ, մետաղական ցանց, ներկ, հաղորդալար, ԴՄՊ, բիտում և այլ անհրաժեշտ ապրանքներ, Քուչակ համայնքի պարային խմբակի պատուհանների և ներքին հարդարման և վերանորոգման աշխատանքները իրականացնելու համար:	Վերանորոգման նախահաշիվ Հավելված 1	762 666
		5. Շինանյութի մատակարարում՝ պեմզաբլոկ, գաջ, մետաղապլաստե դռան բլոկ և պատուհաններ, լինոլիում, ծեփամածիկ, ներկ, մետալախ, սալիկ, գուգարանակոնք, լվացարան, ջրի խողովակներ, գեյզեր ցնցուղով, հաղորդալար, պրոֆիլավոր և հարթ թիթեղ և այլ անհրաժեշտ ապրանքներ, Շենավան համայնքի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի տանիքի, սանհանգույցի և հանդերձարանի վերանորոգման աշխատանքները իրականացնելու համար:	Վերանորոգման նախահաշիվ Հավելված 1	1 796 484
		6. Ընդամենը:		9 535 910
		Շինանյութի մատակարարումն իրականացնող կազմակերպության հետ կնքվել է համապատասխան պայմանագիր: Շինանյութի մատակարարումը կիրականացվի կազմակերպության հետ կնքված շինարարական նյութերի մատակարարման պայմանագրին համապատասխան 9 535 910 դրամ արժողությամբ:		
11	Ծրագրի իրականացման հետ կապված նախատեսվող ծախսեր	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:		
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական և այլ մարմինների հետ	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է տեղական իշխանության կառույցների /Ապարան համայնքի քաղաքապետարանի, Ափնա, Հարթավան և Շենավան համայնքների միջնակարգ դպրոցների և Քուչակ համայնքի համայնքապետարանի հետ համատեղ:		

13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի Վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Թայվանի կողմից, ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի Շինարարական Ծրագրերի պատասխանատուի և Տարածքային Ջարգացման Համակարգողների կողմից, որոնք իրենց հերթին վերահսկում են միջազգային աուդիտի և ՀՀ հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:
----	--	---

Արման Գրիգորյան



«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ապարանի տարածքային զարգացման ծրագրի ղեկավար






**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 հունիսի 2012 թվականի N Մ-410-Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 19-Ի N Մ-231-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱ-
ՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի 2012 թվականի
հունիսի 5-ի N Կ-05/06 գրությունը, որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 19-ի «ԱՌԴԱ» բարեգործական
հիմնադրամի կողմից իրականացվող «Սուրբ Հակոբ եկեղեցու հիմնանորոգում» ծրագրի
մասին» N Մ-231-Ա որոշմամբ հաստատված (2011 թվականի հուլիսի 22-ի N Մ-585-Ա որոշ-
ման խմբագրությամբ) ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2012 թվա-
կանի օգոստոսի 5-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 հունիսի 2012 թվականի N Մ - 411 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 1-ի N 3/3.8-2/7242-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 29-ի N ԱԱ/3-6/5246-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել անհատ բարերար Սեյրան Կարապետյանի կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեոնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված 898 հատ տղամարդու ձեռքի ժամացույցների (Լեոնային Ղարաբաղի Հանրապետության զինանշանով) և լամպերի (11 տեղ, 119 կգ ընդհանուր քաշով, 9586 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 600 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Ժամացույցները նախատեսված են զինծառայողներին պարգևատրելու համար՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի ստեղծման և Շուշիի ազատագրման 20-ամյակի կապակցությամբ:

2. Սույն որոշումն ուղարկել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 հունիսի 2012 թվականի N Մ - 412 - Ա

քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 1-ի N 3/3.8-2/7231-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամույների կոմիտեի 2012 թվականի մայիսի 29-ի N ԱԱ/3-6/5245-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել բարերարների ֆինանսավորմամբ Հայաստանի Հանրապետության երկրապահ կամավորականների միության հասցեով ստացված «Պատանի երկրապահ» ակումբի անդամների համազգեստի համար նախատեսված կտորի (28 տեղ, 1560 կգ ընդհանուր քաշով, 5676 ԱՄՆ-ի դոլար արժեքով, բեռնափոխադրման և այլ ծախսերը կազմում են 1048 ԱՄՆ-ի դոլար, «Արարտյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության երկրապահ կամավորականների միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամույների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 հունիսի 2012 թվականի N Մ - 413 - Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N Մ-059-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սի. Օ. ԷՅ. ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-935-Ա որոշմամբ (2012 թվականի հունվարի 20-ի N Մ-060-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՏՈՍՊ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01803966) 2012 թվականի հունիսի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շապիկների և երեսարբիչների ձեռքբերում՝ 3000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
8 հունիսի 2012 թվականի N Մ - 446 - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-
Ի N Մ-235-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱ-ԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 8-ի N 3/3.8-17625/-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 6-ի N ԱԱ/3-4/5693 -12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 14-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևան քաղաքի Պյոտր Զայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի գրադարանի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-235-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հազարաշեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01816381) 2012 թվականի ապրիլի 10-ին կնքված N ՀՀ-02/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեղինակային հսկողության իրականացում՝ 144000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Նաիրիշին» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01816381) 2012 թվականի ապրիլի 10-ին կնքված՝ N ՀՀ/ՉԴ-01/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 12004832 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԸ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ

**8 հունիսի 2012 թվականի N Մ - 447 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՂՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐ ՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 30-ի N 3/3.8-1/7131-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մայիսի 30-ի N, 02/3193-12 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի մայիսի 29-ի N ՀՔ/22/5296-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 29-ի N ԱԱ/3-4/5240-12 եզրակացությունները **ո Ր Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող՝ 312.462.000 դրամ արժողությամբ «Տուբերկուլյոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում» ծրագիրը (կցվում է):


2. Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև

կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

<<Տուրերկուլոզով հիվանդներն սոցիալական աջակցության տրամադրում>>

Ծ Ր Ա Գ Ի Ր

1. Օրագրի նպատակը և ակնկալվող արդյունքը	Դեղորայքի ընդունման հետևողականության բարելավումը՝ ուղղված տուրերկուլոզով (ՏԲ) հիվանդների բուժման արդյունավետության բարձրացման:
2. Օրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3. Բարեգործը	ՁԻԱՀ-ի, տուրերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամ, Ժնև, Շվեյցարիա
4. Օրագրի կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21, ՀՎՀՀ 00006023
5. Օրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ ողջ տարածքով, Հանրային առողջապահական ոլորտ
6. Օրագրի բյուջեն	312 462 000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ-ի)
7. Բարեգործություն ստացողը	ՀՀ բոլոր մարզերի ՏԲ հիվանդներ
8. Օրագրի իրականացման տևողությունը	01.04.2012-20.04.2013
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ահրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Օրագրի շրջանակներում ծավալվող գործողությունները նախատեսված են հետևյալ ուղղություններով՝ 1. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով սոցիալական աշխատողների համար կրթական միջոցառումների կազմակերպում 2. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով ՏԲ հիվանդների համար կրթական միջոցառումների կազմակերպում 3. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով դեղակայուն ՏԲ հիվանդներին սննդային փաթեթների բաշխում /ստացիոնար բուժման փուլում/

2

	4. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով դեղակայուն ՏԲ հիվանդներին սննդային և հիգիենիկ փաթեթների բաշխում /ամբուլատոր բուժման փուլում/ 5. Դեղակայուն ՏԲ հիվանդներին դեղերի վնասակար ազդեցությունը նվազեցնելու նպատակով հյուսիսի տրամադրում 6. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով դեղակայուն ՏԲ հիվանդներին/կամ բուժքույրերին ԴՈԹ ռազմավարության շրջանակներում տրանսպորտային ծախսերի փոխհատուցում 7. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով ռեգուլյար ՏԲ հիվանդներին/կամ բուժքույրերին ԴՈԹ ռազմավարության շրջանակներում տրանսպորտային ծախսերի փոխհատուցում 8. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով ձմռան 3.5 ամիսների ընթացքում ջեռուցման ծախսերի փոխհատուցում 9. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով ռեգուլյար ՏԲ հիվանդներին սննդային և հիգիենիկ փաթեթների տրամադրում Օրագրի շրջանակներում՝ ըստ ուղղությունների, նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները՝ 1. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով սոցիալական աշխատողների համար կրթական միջոցառումների կազմակերպում 1.1 ՏԲ բուժման հետևողականությունն ապահովող աշխատանքային խմբի ստեղծում, սոցիալական աշխատողների վերապատրաստման և կրթական նյութերի մշակման և տպագրման աշխատանքների կազմակերպում: Մատակարար կազմակերպությունն իր հիմնական անձնակազմի կողմից կիրականացնի 40 երևան քաղաքի և մարզերի սոցիալական աշխատողների վերապատրաստում՝ ռեգուլյար-ՏԲ և ԴԿՏԲ հիվանդների - բուժման հետևողականության բարձրացմանն ուղղված սույն առաջադրանքով:
--	--

նախատեսված բոլոր միջոցառումների իրականացման նպատակով:

Կկազմակերպվի 2-օրյա դասընթացներ, որոնց ընթացքում հիմնական անձնակազմը սոցիալական աշխատողներին կուսուցանի SF, DOTS (ուղղակի վերահսկվող բուժում) ծրագրի, SF ոլորտում սոցիալական և հոգեբանական աջակցության առանձնահատկությունները, SF հիվանդների հետ աշխատելու սկզբունքները:

Կտպագրվեն՝

- Ձեռնարկ/մոդուլ ռեգուլյար SF վերաբերյալ՝ 40 սոց. աշխատողների համար
- Ձեռնարկ/մոդուլ ԴԿՏԲ վերաբերյալ՝ 40 սոց. աշխատողների համար
- ՏԲ-ն լուսաբանող նյութ
- Բուկլետ ԴԿ ՏԲ վերաբերյալ

Բյուջեն՝ 1 888 000 ՀՀ դրամ

1.2 Սոցիալական աշխատողների կողմից իրականացվող կրթական և տեղեկատվական բնույթի միջոցառումներ

40 սոցիալական աշխատողների կողմից իրականացվող կրթական և տեղեկատվական բնույթի միջոցառումներ ամբուլատոր բուժման փուլում գտնվող ռեգուլյար SF և ԴԿ-SF հիվանդների և նրանց ընտանիքների անդամների համար հանրապետության բոլոր մարզերում Երևան քաղաք:

Աշխատանքները ներառում են ամբուլատոր բուժման փուլում գտնվող ռեգուլյար SF և ԴԿՏԲ հիվանդների և նրանց ընտանիքների անդամների համար թվով 40 սոցիալական աշխատողների կողմից կրթական և տեղեկատվական բնույթի միջոցառումներ, ներառյալ՝

- Սոցիալական աշխատողների այցելություններ հիվանդների տուն՝ նրանց կենցաղային պայմաններին ծանոթանալու, հիվանդների

նրանց ընտանիքի անդամներին SF հիվանդության վերաբերյալ ուսուցանելու, ՏԲ-ն լուսաբանող տեղեկատվական նյութերի հատկացման նպատակով՝ տվյալ հիվանդի բուժման ընթացքում առնվազն մեկ անգամ: Աշխատանքների արդյունքում ընտանիքի անդամները կծանոթանան ՏԲ-ից պաշտպանման միջոցներին, հիվանդի նկատմամբ ցուցաբերվող վարքին և հիվանդի նկատմամբ խարանի վերացմանը:

Սոցիալական աշխատողները պետք է ապահովված լինեն տարրական անհրաժեշտ ախտահանիչ միջոցներով (ձեռքերի մշակման թաց անվերջոցիկներ, սպիրտային զնդիկներ կամ գելեր):

Բյուջեն՝ 20 967 011, 04 ՀՀ դրամ

2. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով SF հիվանդների համար կրթական միջոցառումների կազմակերպում

ԴԿՏԲ և Ռեգուլյար SF հիվանդների խորհրդատվություն և ուսուցում կիրականացվի սոցիալական աշխատողների կողմից՝ հավասարը հավասարին սկզբունքով: Դասընթացները կիրականացվեն այն SF կարիներտներում, որտեղ հիվանդները ստանում են իրենց ամբուլատոր բուժման փուլը:

Յուրաքանչյուր եռամսյակ կիրականացվի 1.5 ժամ տևողությամբ 12 դասընթաց, կամ ընդհանուր առմամբ 48 դասընթաց 2012թ. ապրիլից մինչև 2013թ. մարտն ընկած ժամանակահատվածում:

Յուրաքանչյուր խումբ բաղկացած կլինի առավելագույնը 10 հիվանդից: Մասնակիցները կապահովվեն թեթև սննդով և զրեհական պիտույքներով:

Բյուջեն՝ 1 440 000 ՀՀ դրամ

3. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով ղեղակարգ

ՏԲ հիվանդներին սննդային փաթեթների բաշխում /ստացիոնար բուժման փուլում

2012թ. ապրիլից մինչև 2013թ. մարտն ընկած ժամանակահատվածում սոցիալական աջակցություն կտրամադրվի ստացիոնար պայմաններում բուժվող բոլոր ԴԿՏԲ (առավելագույնը՝ 52 հիվանդ յուրաքանչյուր շաբաթ):

Ստացիոնար պայմաններում բուժվող բոլոր ԴԿՏԲ հիվանդները շաբաթական մեկ անգամ կստանան սննդային փաթեթներ հետևյալ բաղադրությամբ:

1. Պահածոյացված միս - առնվազն 400գ
2. Թթվասեր+կաթնաշոռ - առնվազն 300գ (10 % յուղայնության, տուփով)
3. Կարագ - առնվազն 200գ (սերուցքային, տուփով)
4. Կաթ - մեկ լիտր (պաստերացված, առանց կոնսերվանտների և հակաֆոսֆորների, յուղայնությունը 2.5 կամ 3.2%)
5. Պանիր Լոռի - առնվազն 300գ
6. Բանան կամ կիվի - առնվազն 500գ
7. Նարինջ - առնվազն 500գ (կամ համարժեք չոր միրգ):


Ստացիոնար պայմաններում բուժվող ԴԿՏԲ հիվանդներին տրամադրվող սննդային փաթեթների քանակի տատանումը կախված է նշված ժամանակահատվածում ստացիոնար պայմաններում բուժվող հիվանդների թվի հնարավոր տատանումից:

Սոցիալական աջակցության ենթակա ԴԿՏԲ հիվանդների ցանկը մատակարար կազմակերպությանը կտրամադրվի ստացիոնարի ղեկավարության կողմից:

Բյուջեն՝ 9 152 000 ՀՀ դրամ

4. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով դեղակայուն ՏԲ հիվանդներին սննդային և հիգիենիկ փաթեթների բաշխում /ամբուլատոր բուժման փուլում/

4.1 2012թ. ապրիլից մինչև 2013թ. մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում սոցիալական աջակցություն կտրամադրվի բուժման լավ հետևողականություն



ցուցաբերած ամբուլատոր (75% DOT) պայմաններում բուժվող ԴԿՏԲ հիվանդներին: Հիվանդների թիվը հաշվարկվում է հետևյալ կերպ. 210 առաջին ամսում և ամսական ավելացվում է 10 հիվանդով հաշվի առնելով ՏՄՕ-ի և ԲԱՍ-ի ԴԿՏԲ հիվանդների ընդգրկումը: Հիվանդների թիվը ամեն եռամսյակ աճելու է-220 առաջինում, 250_2րդ-ում, 280՝ 3րդ-ում և 310 4րդ եռամսյակներում:

Ամբուլատոր պայմաններում բուժվող բուժման լավ հետևողականություն ցուցաբերած (առնվազն 75% DOT) ԴԿՏԲ հիվանդները յուրաքանչյուր ամիս կստանան 2 սննդային փաթեթ և 1 հիգիենիկ փաթեթ (տվյալ ծառայության համար չափման միավոր է հանդիսանում հիվանդ/փաթեթը, որի 1 միավորը ներառում է վերը նկարագրված սխեմայով հիվանդին մեկ ամսվա ընթացքում տրվող մեկ անգամ հիգիենիկ և երկու անգամ տրվող սննդային փաթեթները):

Մեկ սննդային փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝

1. Արևածաղկի ձեթ - 2լ (100% ռաֆինացված, դեզոդորացված, պարունակում է վիտամին E)
2. Մակարոն - 800գ (փաթեթավորված, բարձր կարգի ալյուրից պատրաստված)
3. Խտացրած կաթ - 380գ (պահածոյացված, խտացրած կաթ շաքարով, 8.5% յուղայնության)
4. Շաքարավազ - 1կգ (փաթեթավորված)
5. Բրինձ - 0.5կգ (սպիտակ, երկարահատիկ)
6. Ոսպ - 0.5կգ (փաթեթավորված)
7. Հնդկաձավար - 0.5կգ (փաթեթավորված)
8. Պահածոյացված միս - 400գ
9. Ալյուր - 1կգ (բարձր տեսակի)

Մեկ հիգիենիկ փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝

1. Ամանեղեն լվալու հեղուկ - 500գ
2. Օձառ - 4 հատ (ձեռքի)

3. Շամպուն - 400մլ (նորմալ մազերի)
4. Մաքրող փոշի - 500գ (քլոր պարունակող)
5. Լվացքի փոշի - 800գ (ձեռքով և ավտոմատ լվացքի համար)
6. Ատամի մածուկ - 50 մլ
7. Խոզանակ ատամի - 1հատ

Բյուջեն՝ 63 148 259, 29 ՀՀ դրամ

4.2 Կլազմակերպվի ԴԿ ՏԲ հիվանդների սոցիալական աջակցության բաշխումը:

Բյուջեն՝ 9 000 000 ՀՀ դրամ

5. Դեղակայուն ՏԲ հիվանդներին դեղերի վնասակար ազդեցությունը նվազեցնելու նպատակով հյուսիսի տրամադրում

ԴԿՏԲ հիվանդները (ստացիոնարում, տուբերկուլոզային կաբինետներում կամ տանը) դեղորայքի ընդունման ժամանակ ամեն օր (շաբաթական 6 օր, ամիսը 26 օր) պետք է ստանան բնական հյութ դեղորայքի տոքսիկ ազդեցությունը նվազեցնելու նպատակով: Մեկ հիվանդին օրական տրամադրվում է 400մլ բնական հյութ տեղական արտադրության: Հիվանդներին տրամադրվող հյութի քանակը հաշվարկելիս հաշվի կառնվի նաև հիվանդի առնվազն 75% DOT- ի ապահովումը:

Բյուջեն՝ 16 712 631, 00 ՀՀ դրամ

6. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով դեղակայուն ՏԲ հիվանդներին/կամ բուժքույրերին ԴՈԹ ռազմավարության շրջանակներում տրանսպորտային ծախսերի փոխհատուցում

ԴԿՏԲ հիվանդները ամեն օր (շաբաթական 6 օր, ամիսը 26 օր) դեղորայքը կընդունեն բուժաշխատողների (բուժքույրերի) անմիջական վերահսկողության տակ (DOT) պոլիկլինիկաներում կամ տանը:


Հիվանդները, որոնք կայցելեն ՏԲ կենտրոններ և կընդունեն դեղորայքը բուժաշխատողների ուղղակի վերահսկողության տակ կստանան իրենց ճանապարհածախսին (միջմարզային կամ միջքաղաքային՝ հասարակական տրանսպորտի կիրառմամբ) համարժեք փոխհատուցում՝ առավելագույնը՝ 400 դրամ: Այն դեպքում, երբ հիվանդը առողջական վիճակից ելնելով, ֆիզիկապես ի վիճակի չէ այցելել DOT կենտրոն, նրան կայցելի ՏԲ կաբինետի բուժքույրը՝ DOT իրականացնելու նպատակով: Մատակարար կազմակերպության կողմից վերոնշյալ չափով կփոխհատուցվի նաև բուժքրոջ ճանապարհածախսը: Հիվանդների որոշ մասը կարող են փոխհատուցվել օրական 2 անգամ՝ կախված հավելյալ DOT ընդունման անհրաժեշտությունից: Մատակարար կազմակերպության պատասխանատուն ՏԲ կաբինետի բժշկի հետ համատեղ որոշում են ճանապարհածախսի փոխհատուցման ենթակա բուժքույրերի և հիվանդների ցուցակները:

Բյուջեն՝ 29 848 000, 00 ՀՀ դրամ

7. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով ռեգուլյար ՏԲ հիվանդներին/կամ բուժքույրերին ԴՈԹ ռազմավարության շրջանակներում տրանսպորտային ծախսերի փոխհատուցում

Հիվանդները, որոնք կայցելեն ՏԲ կենտրոններ և կընդունեն դեղորայքը բուժաշխատողների ուղղակի վերահսկողության տակ կստանան իրենց ճանապարհածախսին (միջմարզային կամ միջքաղաքային՝ հասարակական տրանսպորտի կիրառմամբ) համարժեք փոխհատուցում՝ առավելագույնը՝ 400 դրամ, ամիսը 13 օր: Այն դեպքում, երբ հիվանդը առողջական վիճակից ելնելով, ֆիզիկապես ի վիճակի չէ այցելել DOT կենտրոն, նրան կայցելի ՏԲ կաբինետի բուժքույրը՝ DOT իրականացնելու նպատակով: Մատակարար կազմակերպության կողմից վերոնշյալ չափով կփոխհատուցվի նաև բուժքրոջ ճանապարհածախսը: Հիվանդների որոշ մասը կարող են փոխհատուցվել օրական 2 անգամ՝ կախված հավելյալ DOT ընդունման անհրաժեշտությունից: Մատակարար կազմակերպության պատասխանատուն ՏԲ կաբինետի բժշկի հետ համատեղ որոշում են ճանապարհածախսի փոխհատուցման ենթակա բուժքույրերի և հիվանդների ցուցակները:

Բյուջեն՝ 28 600 000, 00 ՀՀ դրամ



8. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով ձևաձև 3.5 ամիսների ընթացքում ջեռուցման ծախսերի փոխհատուցում

Ամբուլատոր բուժման փուլում գտնվող ԴԿ ՏԲ հիվանդների 50%-ը կստանան ջեռուցման ծախսերի փոխհատուցում՝ ձմեռային ամիսների համար, ամսական 15.000 դրամի չափով նոյեմբեր (կես ամիս), դեկտեմբեր, հունվար, փետրվար ամիսների (ընդհանուր առմամբ 3,5 ամիս) մեջ ընկած ժամանակահատվածի համար: Փոխհատուցման ենթակա հիվանդների մատակարար կազմակերպության պատասխանատուի և սոցիալական աշխատողների հետ համատեղ տվյալ ՏԲ կաբինետի սպասարկման տարածքում ապրող ԴԿ-ՏԲ հիվանդների սոցիալական վիճակի գնահատման հիման վրա: Փոխհատուցման ենթակա հիվանդների ցանկերը կհամաձայնեցվեն նաև «Տուբերկուլոզի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի հետ: Ընդգրկվելու են նաև բուժումը ձախողված հիվանդները: Բյուջեն՝ 10 290 000, 00 ՀՀ դրամ

9. Բուժման հետևողականության բարձրացման նպատակով ռեգուլյար ՏԲ հիվանդներին սննդային և հիգիենիկ փաթեթների տրամադրում

9.1 Բուժման լավ հետևողականություն ցուցաբերած ռեգուլյար ՏԲ հիվանդները բուժման ընթացքում, յուրաքանչյուր ամիս կստանան մեկական սննդային և մեկական հիգիենիկ փաթեթ, յուրաքանչյուր ամիս միջին հաշվով 500 հիվանդ (տվյալ ծառայության համար չափման միավոր է հանդիսանում հիվանդ-փաթեթը, որի իր մեջ ներառում է 1 հիվանդին տրված մեկ սննդային և մեկ հիգիենիկ փաթեթը):

Մեկ սննդային փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝

1. Արևածաղկի ձեթ - 2լ (100% ռաֆինացված, դեզոդորացված, պարունակում

2. Է վիտամին E)
2. Սակարոն - 800գ (փաթեթավորված, բարձր կարգի ալյուրից պատրաստված)
3. Խտացրած կաթ - 380գ (պահածոյացված, խտացրած կաթ շաքարով, 8.5% յուղայնության)
4. Շաքարավազ - 1կգ (փաթեթավորված)
5. Բրինձ - 0.5կգ (սպիտակ, երկարահատիկ)
6. Ոսպ - 0.5կգ (փաթեթավորված)
7. Հնդկաձավար - 0.5կգ (փաթեթավորված)
8. Պահածոյացված միս - 400գ
9. Ալյուր - 1կգ (բարձր տեսակի)

Մեկ հիգիենիկ փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝

1. Ամանեղեն լվալու հեղուկ - 500գ
2. Օճառ - 4 հատ (ձեռքի)
3. Շամպուն - 400մլ (նորմալ մազերի)
4. Մաքրող փոշի - 500գ (քլոր պարունակող)
5. Լվացքի փոշի - 800գ (ձեռքով և ավտոմատ լվացքի համար)
6. Ատամի մածուկ - 50 մլ
7. Խոզանակ ստամի - 1հատ

• Բյուջեն՝ 71 500 000, 00 ՀՀ դրամ.

9.2 Կկազմակերպվի ռեգուլյար ՏԲ հիվանդների սոցիալական աջակցության բաշխումը:

Բյուջեն՝ 9 000 000 ՀՀ դրամ:

10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները

Ռեգուլյար ՏԲ հիվանդի մեկ սննդային փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝

և նախատեսվող զինք

1. Արևածաղկի ձեթ - 2լ (100% ռաֆինացված, դեզոդորացված, պարունակում է վիտամին E)
2. Մակարոն - 800գ (փաթեթավորված, բարձր կարգի ալյուրից պատրաստված)
3. Խտացրած կաթ - 380գ (պահածոյացված, խտացրած կաթ շաքարով, 8.5% յուղայնության)
4. Շաքարավազ - 1կգ (փաթեթավորված)
5. Բրինձ - 0.5կգ (սպիտակ, երկարահատիկ)
6. Ոսպ - 0.5կգ (փաթեթավորված)
7. Հնդկաձավար - 0.5կգ (փաթեթավորված)
8. Պահածոյացված միս - 400գ
9. Ալյուր - 1կգ (բարձր տեսակի)

1 փաթեթի արժեքն է՝ 9.000 ՀՀ դրամ

Ընդհանուր փաթեթների արժեքն է՝ 49 500 000 ՀՀ դրամ:

Ռեզուլյար ՏԲ հիվանդի մեկ հիգիենիկ փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝

1. Ամանեղեն լվալու հեղուկ - 500գ
2. Օճառ - 4 հատ (ձեռքի)
3. Շամպուն - 400մլ (սոսնակ մազերի)
4. Մաքրող փոշի - 500գ (քլոր պարունակող)
5. Լվացքի փոշի - 800գ (ձեռքով և ավտոմատ լվացքի համար)
6. Ատամի մածուկ - 50 մլ
7. Խոզանակ ատամի - 1հատ

1 փաթեթի արժեքն է՝ 4000 ՀՀ դրամ

Ընդհանուր փաթեթների արժեքն է՝ 22 000 000,00 ՀՀ դրամ:

2/8.12

Ստացիոնար փուլում բուժվող ԴԿ- ՏԲ հիվանդի 1 փաթեթի պարունակությունը հետևյալն է՝

8. Պահածոյացված միս - առնվազն 400գ
9. Թթվասեր+կաթնաշոռ - առնվազն 300գ (10 % յուղայնության, տուփով)
10. Կարագ - առնվազն 200գ (սերուցքային, տուփով)
11. Կաթ - մեկ լիտր (պաստերացված, առանց կոնսերվանտների և հակաբիոտիկների, յուղայնությունը 2.5 կամ 3.2%)
12. Պանիր Լոռի - առնվազն 300գ
13. Բանան կամ կիվի - առնվազն 500գ
14. Նարինջ - առնվազն 500գ (կամ համարժեք չոր միրգ):

1 փաթեթի արժեքն է՝ 4000 ՀՀ դրամ


Ընդհանուր փաթեթների արժեքն է՝ 9 152 000, 00ՀՀ դրամ:

ԴԿ ՏԲ հիվանդի մեկ սննդային փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝

10. Արևածաղկի ձեթ - 2լ (100% ռաֆինացված, դեզոդորացված, պարունակում է վիտամին E)
11. Մակարոն - 800գ (փաթեթավորված, բարձր կարգի ալյուրից պատրաստված)
12. Խտացրած կաթ - 380գ (պահածոյացված, խտացրած կաթ շաքարով, 8.5% յուղայնության)
13. Շաքարավազ - 1կգ (փաթեթավորված)
14. Բրինձ - 0.5կգ (սպիտակ, երկարահատիկ)
15. Ոսպ - 0.5կգ (փաթեթավորված)
16. Հնդկաձավար - 0.5կգ (փաթեթավորված)
17. Պահածոյացված միս - 400գ
9. Ալյուր - 1կգ (բարձր տեսակի)

1 փաթեթի արժեքն է՝ 9000 ՀՀ դրամ

2/8.12



		Ընդհանուր փաթեթների արժեքն է՝ 51 660 000, 00ՀՀ դրամ: ԴԿ ՏԲ հիվանդի մեկ հիգիենիկ փաթեթի նվազագույն պարունակությունը հետևյալն է՝ - Ամանեղեն լվալու հեղուկ - 500գ - Օճառ - 4 հատ (ձեռքի) - Շամպուն - 400մլ (նորմալ մազերի) - Մաքրող փոշի - 500գ (քլոր պարունակող) - Լվացքի փոշի - 800գ (ձեռքով և ավտոմատ լվացքի համար) - Ատամի մածուկ - 50 մլ - Խոզանակ ատամի - 1հատ 1 փաթեթի արժեքն է՝ 4002,88 ՀՀ դրամ Ընդհանուր փաթեթների արժեքն է՝ 11 488 259,29 ՀՀ դրամ Տրամադրվող հեղուկները մեկ հիվանդի համար մեկ օրում պետք է լինեն հետևյալը՝ - Հյուք բնական 200մլ X 2= 400 մլ 1 միավորի արժեքն է 124,50 ՀՀ դրամ: Ընդհանուր հեղուկների արժեքն է՝ 16 712 631,00 ՀՀ դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական և պահպանման ծախսեր 40 916 081,27 ՀՀ դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ ծախսեր, գրենական պիտույքներ, համակարգչի, կապի, կոմունալ և այլ ծախսեր:
12.	Համագործակցությունը պետական կառավարման,	Առողջապահության նախարարություն, Տուրքմենիստանի Ազգային գրասենյակ ՊՈԱԿ, <<Բժիշկներ առանց սահմանի>> կազմակերպություն:

	տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների	
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել ամսեկան, եռամսյակային, ավարտական հաշվետվություններ պատվիրատուին՝ Առողջապահության նախարարությանը: Կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր պատվիրատուի, ինչպես նաև Գլոբալ Հիմնադրամի տեղային գործակալի կողմից: Նախատեսվում է հաշվետվություններ կայացնել նաև ՀՀ կառավարության բարեգործական, ծրագրերի համակարգման հանձնաժողովին: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է երկուստեք և ՀՀ մարզերում կատարվող գործողությունների անմիջական վերահսկում:

Ա.Բ.Բ./Բ.Բ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՐՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
8 հունիսի 2012 թվականի N Մ- 448-Ա
քաղ. երևան

«ԲԺՇԿԱԿԱՆ ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 5-ի N 3/3.8-2/7458-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի մայիսի 31-ի N ՀՔ/22/5437-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 31-ի N ԱԱ/3-6/5372-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Մոլեկուլային բժշկության ինստիտուտի կողմից ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հասցեով ուղարկված բերի (մոլեկուլային գենետիկական հետազոտությունների համար նախատեսված BD FACScan Flow Cytometer և ABI PRISM 310 Genetic Analyzer սարքեր, 2 տեղ, 309.9 կգ ընդհանուր քաշով, 21500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ նշված բերի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԻԸ



Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
8 հունիսի 2012 թվականի N Մ-449
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱ-
ՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում
տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և
դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրա-
մաշնորհային ծրագիր)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջա-
պահության նախարարության 2012 թվականի մայիսի 31-ի N ՍԲ/15-1/5410-11 գրությունը և
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի
6-ի N 3/3.8-1/7522-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պե-
տական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 4-ի N ԱԱ//3-4/5582-12 եզրակացու-
թյունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-
թյան և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմի-
ջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի
Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղա-
կայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին»
N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի
նշանակություն՝


«Այ Էյ Բի Սենթեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02559327) 2012 թվականի մայիսի 22-ին
կնքված՝ N A-12/35 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է
դասընթացների կազմակերպման և իրականացման ծառայությունների մատուցում՝ 216000
դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՆԱԽ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 հունիսի 2012 թվականի N Մ- 450
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-119-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի
հայկական մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 8-ի N 3/3.8-1/7636-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 7-ի N ԱԱ/3-4/5798-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 02535097) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2011-2012 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-119-Ա որոշմամբ (2011 թվականի ապրիլի 1-ի N Մ-203-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շանթ» ՄՊԸ-ի Երևանի մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 05504868) 2012 թվականի մայիսի 14-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Շանթ» հեռուստաընկերության հեռուստաէթերում երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերյալ սոցիալական հոլովակի տեղադրում՝ 2285550 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
8 հունիսի 2012 թվականի N Մ- 454

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱԴԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՋԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՋԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ
ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԵՆԹԱԴԱՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 7-ի N 3/3.8-1/7590-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մայիսի 30-ի N 02/3201-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի մայիսի 29-ի N ՀՔ/22/5291-12, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունիսի 5-ի N B961-65FC-455A եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարգարյան 6/2, ՀՎՀՀ՝ 01243384) իրականացվող՝ 94204000 դրամ ընդհանուր արժեքով «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակցություն» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի ենթադրամաշնորհային ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝ «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2012 թվականի ապրիլի 6-ին կնքված՝ N SU9-ՀՀԾՁԲ-03/12 պայմա-

2


նագրում (հավելված N 1) և 2012 թվականի հունիսի 6-ի համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի հունիսի 1-ից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում «Ինտերնետ» կապի ներդրման և սպասարկման ծառայությունների մատուցում՝ 1312448 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզպետներին:





Ա. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

**«Տուրբերկուղի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակցություն»
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՂԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱԾՎՈՂ
ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻ**

1. Ծրագրի նպատակը	Կրճատել տուրբերկուղի (ՏԲ) բեռը Հայաստանի Հանրապետությունում՝ բարձրացնելով ՏԲ ախտորոշման, որակյալ բուժման ծառայությունների մատչելիությունը, և բնակչությանն անվճար հակատուրբերկուղալին բուժօգնություն տրամադրելով:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
3. Բարեգործը	ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի, Տուրբերկուղի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամ 1214 Վերներ, ժնև, Շվեյցարիա
4. Ծրագրի կատարողը	ՀՀ առողջապահության նախարարության «Տուրբերկուղի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ ք. Երևան, Մարգարյան 6/2 ՀՎՀՀ 01243384
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ք. Երևանում և ՀՀ բոլոր մարզերում: Ծրագրի բնագավառը՝ առողջապահություն:
6. Ծրագրի բյուջեն	94 204 000 (իննսունչորս միլիոն երկու հարյուր չորս հազար) ՀՀ դրամ:
7. Բարեգործություն ստացողը	Երևանում և Հայաստանի Հանրապետության մարզերում տուրբերկուղի բուժմամբ և կառավարմամբ զբաղվող բժշկական հաստատությունները, ինչպես նաև՝ Տուրբերկուղով հիվանդ ՀՀ քաղաքացիները և նրանց ընտանիքների անդամները:
8. Ծրագրի իրականացման տևողությունը	2012 թվականի ապրիլի 1-ից մինչև 2013 թվականի ապրիլի 1-ը:

9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Սույն ծրագիրը հանդիսանում է ՀՀ առողջապահության նախարարության «ՀՀ-ում տուրբերկուղի ազգային ծրագրի ուժեղացում և դեղորայքակայուն տուրբերկուղի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհային ծրագիր, որի առաջին տարվա պայամանագրի ժամկետը նախատեսված է 2012 թ. ապրիլի 1-ից մինչև 2013 թ. ապրիլի 1-ը: Ծրագիրը իրականացվելու է ամբողջությամբ անվճար: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ 1. Միջազգային փորձագետի կողմից դեղորայքակայուն տուրբերկուղով հակազդման ծրագրի վերանայում՝ համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության տարածաշրջանային ծրագրի, Ժամկետները III եռամսյակ 2012թ. ընթացքում Նախատեսված բյուջե 8 283 828 ՀՀ դրամ (Միջազգային փորձագետները ընտրվում և ներկայացվում են Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից՝ տվյալ ծառայության առաջադրանքը և ժամանակացույցը նախորդը համաձայնեցնելով ՀՀ ԱՆ «Տուրբերկուղի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի հետ): 2. Միջազգային փորձագետի կողմից հակատուրբերկուղալին դեղամիջոցների կառավարման բարելավման ուղղված ընթացակարգի մշակում Ժամկետները III եռամսյակ 2012թ. ընթացքում Նախատեսված բյուջե 4 329 650 ՀՀ դրամ (Միջազգային փորձագետները ընտրվում և ներկայացվում են Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից՝ տվյալ ծառայության առաջադրանքը և ժամանակացույցը նախորդը համաձայնեցնելով ՀՀ ԱՆ «Տուրբերկուղի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի հետ): 3. Դեղորայքակայուն տուրբերկուղի կառավարման վերաբերյալ վերապատրաստում արտասահմանում (տարեկան 6 մասնակից) Ժամկետները՝ 2012թ III եռամսյակի ընթացքում՝ Նախատեսված բյուջե 4 812 643 ՀՀ դրամ 2013թ I եռամսյակի ընթացքում Նախատեսված բյուջե 4 812 643 ՀՀ դրամ Ենթաընդամենը՝ 9 625 285 ՀՀ դրամ (Արտերկրում դեղորայքակայուն տուրբերկուղի կառավարման վերաբերյալ վերապատրաստումները իրականացվում են Առողջապահության համաշխարհային կազմակերպության հետ համագործակցող ուսումնական կենտրոններում: Վերը նշված դասընթացներին մասնակցում են դեղորայքակայուն տուրբերկուղի բուժման գործընթացում ներգրավված մասնագետները):
---	--

	4. Դեղորայքակայուն տուբերկուլոզի կառավարման տեղային դասընթացների կազմակերպում միջազգային փորձագետ/դասավանդողների կողմից տուբերկուլոզի ստացիոնար բուժում իրականացնող մասնագետների համար (տարեկան 20 մասնակից) Ժամկետները III եռամսյակ 2012թ. ընթացքում Նախատեսված բյուջե 4 239 145 ՀՀ դրամ (Դեղորայքակայուն տուբերկուլոզի կառավարման տեղային դասընթացների անցկացման համար մասնագետներ են հրավիրվում Առողջապահության համաշխարհային կազմակերպության հետ համագործակցող ուսում նական կենտրոններից՝ տվյալ դասընթացի առաջադրանքը և ժամանակացույցը նախորդ համաձայնեցնելով ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի հետ): Դասընթացին մասնակցելու են «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի և դեղորայքակայուն տուբերկուլոզի բուժումն իրականացնող մասնագետները): 5. Դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդների ամբուլատոր բուժումն իրականացնող մասնագետների վերապատրաստում (տարեկան 20 մասնակից) Ժամկետները III եռամսյակ 2012թ. ընթացքում Նախատեսված բյուջե 823 600 ՀՀ դրամ (Դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդների ամբուլատոր բուժման վերաբերյալ վերապատրաստմանը ներկայացվում են այն մասնագետները, որոնք վեջին երեք տարիների ընթացքում չեն մասնակցել նշված վերապատրաստումներին: Դասընթացները վարելու են տեղական մասնագետները, որոնք անցել են վերապատրաստողների վերապատրաստման դասընթացներ և ունեն համապատասխան վկայական): 6. Տուբերկուլոզային դասընթացներ ԱԱԴՊ օդակի բժիշկների և բուժքույրերի համար Ժամկետները IV եռամսյակ 2012թ. ընթացքում Նախատեսված բյուջե 3 285 600 ՀՀ դրամ I եռամսյակ 2013թ. ընթացքում Նախատեսված բյուջե 3 285 600 ՀՀ դրամ Ենթաընդամենը 6 571 200 ՀՀ դրամ (Տուբերկուլոզի վերաբերյալ դասընթացներին մասնակցելու համար ներկայացվում են առողջության առաջնային պահպանման (ԱԱԴՊ) այն բժիշկներն ու բուժքույրերը, որոնք վերջին երեք տարիների ընթացքում չեն անցել վերապատրաստում): 7. Միջազգային փորձագետների կողմից Տուբերկուլոզ/ՄԻԱԿ համաճարակաբանական հսկողության համակարգի վերանայում և բարելավում Ժամկետները III եռամսյակ 2012թ. ընթացքում Նախատեսված բյուջե 3 578 708 ՀՀ դրամ (Միջազգային փորձագետները ընտրվում և ներկայացվում են Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից՝ տվյալ ծառայության առաջադրանքը և ժամանակացույցը նախորդ համաձայնեցնելով ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի
---	--

	ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի հետ): 8. Տուբերկուլոզի ազգային ծրագրի աշխատանքների կատարումն ապահովվելու նպատակով լրացուցիչ ֆինանսական աջակցություն Ժամկետները 2012թ II եռամսյակի ընթացքում՝ Նախատեսված բյուջե 15 731 202 ՀՀ դրամ 2012թ III եռամսյակի ընթացքում՝ Նախատեսված բյուջե 15 731 202 ՀՀ դրամ 2012թ IV եռամսյակի ընթացքում Նախատեսված բյուջե 7 865 601 ՀՀ դրամ 2013թ I եռամսյակի ընթացքում Նախատեսված բյուջե 7 865 601 ՀՀ դրամ Ենթաընդամենը 47 193 606 ՀՀ դրամ 9. Համակարգի սպասարկման մասնագետի ծառայությունների վճար Ժամկետները 2012թ II եռամսյակի ընթացքում՝ Նախատեսված բյուջե 934 524 ՀՀ դրամ 2012թ III եռամսյակի ընթացքում՝ Նախատեսված բյուջե 934 524 ՀՀ դրամ 2012թ IV եռամսյակի ընթացքում Նախատեսված բյուջե 467 262 ՀՀ դրամ 2013թ. I եռամսյակի ընթացքում Նախատեսված բյուջե 467 262 ՀՀ դրամ Ենթաընդամենը 2 803 572 ՀՀ դրամ 10. ՏԲ հաստատությունների ինտերնետ ծառայության վճար /36 պիլոտային կետերի համար/ Ժամկետները 2012թ. II եռամսյակի ընթացքում՝ Նախատեսված բյուջե 297 000 ՀՀ դրամ 2012թ. III եռամսյակի ընթացքում՝ Նախատեսված բյուջե 297 000 ՀՀ դրամ 2012թ. IV եռամսյակի ընթացքում Նախատեսված բյուջե 297 000 ՀՀ դրամ Ենթաընդամենը 891 000 ՀՀ դրամ 11. «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի ինտերնետ ծառայության վճար Ժամկետները 2012թ. II եռամսյակի ընթացքում՝
---	---

	2012թ. III եռամսյակի ընթացքում՝ Նախատեսված բյուջե՝ 228 000 ՀՀ դրամ 2012թ. IV եռամսյակի ընթացքում Նախատեսված բյուջե՝ 228 000 ՀՀ դրամ Ենթաընդամենը՝ 684 000 ՀՀ դրամ 12. Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի մշտադիտարկման և գնահատման արդյունքների ներկայացման վերաբերյալ կիսամյակային հանդիպումների կազմակերպում (տարեկան 2 հանդիպում) Ժամկետները՝ 2012թ. III եռամսյակի ընթացքում՝ Նախատեսված բյուջե՝ 500 000 ՀՀ դրամ, 2012թ. IV եռամսյակի ընթացքում Նախատեսված բյուջե՝ 500 000 ՀՀ դրամ, Ընդամենը՝ 1 000 000 ՀՀ դրամ 13. Տուբերկուլոզի ախտորոշման համար Երևան քաղաքի և մարզերի բուժօգնություններից ազգային ռեֆերենս լաբորատորիա նմուշների տեղափոխման համար անհրաժեշտ բենզինի գնման համար նախատեսված ծախսերի փոխհատուցում Ժամկետները՝ 2012թ. II եռամսյակի ընթացքում՝ Նախատեսված բյուջե՝ 1 393 469 ՀՀ դրամ 2012թ. III եռամսյակի ընթացքում՝ Նախատեսված բյուջե՝ 1 393 469 ՀՀ դրամ 2012թ. IV եռամսյակի ընթացքում Նախատեսված բյուջե՝ 696 734 ՀՀ դրամ 2013թ. I եռամսյակի ընթացքում Նախատեսված բյուջե՝ 696 734 ՀՀ դրամ Ենթաընդամենը՝ 4 180 406 ՀՀ դրամ Ընդամենը՝ 94 204 000 ՀՀ դրամ									
	Ծրագրի բյուջեն ըստ եռամսյակների՝ <table border="1"> <thead> <tr> <th>Ժամանակահատված</th><th>ՀՀ դրամ</th></tr> </thead> <tbody> <tr> <td>I եռամսյակ</td><td>18 584 195</td></tr> <tr> <td>II եռամսյակ</td><td>45 151 768</td></tr> <tr> <td>III եռամսյակ</td><td>13 340 197</td></tr> <tr> <td>IV եռամսյակ</td><td>17 127 840</td></tr> </tbody> </table>	Ժամանակահատված	ՀՀ դրամ	I եռամսյակ	18 584 195	II եռամսյակ	45 151 768	III եռամսյակ	13 340 197	IV եռամսյակ
Ժամանակահատված	ՀՀ դրամ									
I եռամսյակ	18 584 195									
II եռամսյակ	45 151 768									
III եռամսյակ	13 340 197									
IV եռամսյակ	17 127 840									

5

10. Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է ապրանքների և ծառայությունների ձեռքբերում և մատուցում՝ 94 204 000 ՀՀ դրամ ընդհանուր արժույթյամբ: <table border="1"> <thead> <tr> <th>Նկարագրություն</th><th>Նախատեսված բյուջե /ՀՀ դրամ/</th></tr> </thead> <tbody> <tr> <td>Հյուրանոցային ծախսեր արտերկրից ժամանող միջազգային փորձագետների համար</td><td>2 128 638</td></tr> <tr> <td>Հյուրանոցային ծախսեր ՀՀ-ում վերապատրաստմանը դասընթացներին մասնակցող մասնագետների համար համար</td><td>4 320 000</td></tr> <tr> <td>Ավիատոմս՝ արտասահմանից ժամանող միջազգային փորձագետների համար</td><td>1 246 032</td></tr> <tr> <td>Ավիատոմս՝ արտասահման մեկնող տեղական մասնագետների</td><td>1 557 040</td></tr> <tr> <td>Միջոցառումների հյուրասիրություն</td><td>2 610 000</td></tr> <tr> <td>Վերապատրաստման դասընթացների մասնակիցների համար նախատեսված պատճենահանման և տպագրական ծախսեր</td><td>287 800</td></tr> <tr> <td>Գրասենյակի ընթացիք աշխատանքների համար նախատեսված պատճենահանման և տպագրական ծախսեր</td><td>200 000</td></tr> <tr> <td>Վերապատրաստման դասընթացների մասնակիցների համար նախատեսված գրենական պիտույքներ</td><td>898 783</td></tr> <tr> <td>Գրասենյակի ընթացիք աշխատանքների համար նախատեսված գրենական պիտույքներ</td><td>200 000</td></tr> <tr> <td>Բենզինի ձեռքբերում</td><td>5 480 406</td></tr> <tr> <td>Ավտոմեքենաների վերանորոգման և սպասարկման ծախսեր</td><td>3 526 800</td></tr> <tr> <td>Տուբերկուլոզի կառավարման առցանց համակարգային ծրագրի ներդրման համար ինտերնետ կապի տրամադրում և սպասարկում կից՝ 06.04.2012թ.-ին կնքված «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ N SU4-ՇՀՇՁԲ-03/12 ծառայությունների ձեռքբերման պայմանագիրը, որը գործում է մինչև 2013թվ դեկտեմբերի 31-ը՝</td><td>1 575 000</td></tr> </tbody> </table>	Նկարագրություն	Նախատեսված բյուջե /ՀՀ դրամ/	Հյուրանոցային ծախսեր արտերկրից ժամանող միջազգային փորձագետների համար	2 128 638	Հյուրանոցային ծախսեր ՀՀ-ում վերապատրաստմանը դասընթացներին մասնակցող մասնագետների համար համար	4 320 000	Ավիատոմս՝ արտասահմանից ժամանող միջազգային փորձագետների համար	1 246 032	Ավիատոմս՝ արտասահման մեկնող տեղական մասնագետների	1 557 040	Միջոցառումների հյուրասիրություն	2 610 000	Վերապատրաստման դասընթացների մասնակիցների համար նախատեսված պատճենահանման և տպագրական ծախսեր	287 800	Գրասենյակի ընթացիք աշխատանքների համար նախատեսված պատճենահանման և տպագրական ծախսեր	200 000	Վերապատրաստման դասընթացների մասնակիցների համար նախատեսված գրենական պիտույքներ	898 783	Գրասենյակի ընթացիք աշխատանքների համար նախատեսված գրենական պիտույքներ	200 000	Բենզինի ձեռքբերում	5 480 406	Ավտոմեքենաների վերանորոգման և սպասարկման ծախսեր	3 526 800	Տուբերկուլոզի կառավարման առցանց համակարգային ծրագրի ներդրման համար ինտերնետ կապի տրամադրում և սպասարկում կից՝ 06.04.2012թ.-ին կնքված «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ N SU4-ՇՀՇՁԲ-03/12 ծառայությունների ձեռքբերման պայմանագիրը, որը գործում է մինչև 2013թվ դեկտեմբերի 31-ը՝	1 575 000
Նկարագրություն	Նախատեսված բյուջե /ՀՀ դրամ/																										
Հյուրանոցային ծախսեր արտերկրից ժամանող միջազգային փորձագետների համար	2 128 638																										
Հյուրանոցային ծախսեր ՀՀ-ում վերապատրաստմանը դասընթացներին մասնակցող մասնագետների համար համար	4 320 000																										
Ավիատոմս՝ արտասահմանից ժամանող միջազգային փորձագետների համար	1 246 032																										
Ավիատոմս՝ արտասահման մեկնող տեղական մասնագետների	1 557 040																										
Միջոցառումների հյուրասիրություն	2 610 000																										
Վերապատրաստման դասընթացների մասնակիցների համար նախատեսված պատճենահանման և տպագրական ծախսեր	287 800																										
Գրասենյակի ընթացիք աշխատանքների համար նախատեսված պատճենահանման և տպագրական ծախսեր	200 000																										
Վերապատրաստման դասընթացների մասնակիցների համար նախատեսված գրենական պիտույքներ	898 783																										
Գրասենյակի ընթացիք աշխատանքների համար նախատեսված գրենական պիտույքներ	200 000																										
Բենզինի ձեռքբերում	5 480 406																										
Ավտոմեքենաների վերանորոգման և սպասարկման ծախսեր	3 526 800																										
Տուբերկուլոզի կառավարման առցանց համակարգային ծրագրի ներդրման համար ինտերնետ կապի տրամադրում և սպասարկում կից՝ 06.04.2012թ.-ին կնքված «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ N SU4-ՇՀՇՁԲ-03/12 ծառայությունների ձեռքբերման պայմանագիրը, որը գործում է մինչև 2013թվ դեկտեմբերի 31-ը՝	1 575 000																										

6

	2012 թվականի I, II, և III եռամսյակներում ինտերնետային կապի տրամադրման համար նախատեսված է 1 575 000 ՀՀ դրամ:	
	2013 թվականին ինտերնետային կապը կտրամադրվի համաձայն նոր ֆինանսական միջոցների տրամադրման, այդ իսկ պատճառով պայմանագիրը կնքվել է մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ը	
	Դասախոսավճար արտերկրից ժամանող միջազգային փորձագետների համար	12 492 509
	Տեղական մասնագետների դասախոսավճար	575 200
	Վերապատրաստման դասընթացների վճար արտերկրի մեկնող մասնագետների համար	5 217 759
	Աշխատավարձ	40 680 378
	Օրապահիկ արտերկրից ժամանող միջազգային փորձագետների համար	2 102 868
	Գիշերավարձ և օրապահիկ արտերկրի մեկնող մասնագետների համար	2 632 243
	ՀՀ-ում վերապատրաստման դասընթացների մասնակիցների համար նախատեսված ճանապարհածախս	544 000
	«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի մասնագետների համար նախատեսված օրապահիկ և գիշերավարձ	1 712 500
	Վիզա/ապահովագրություն	425 727
	Քաղաքների լիցքավորում	900 000
	Համակարգիչների/ համակարգչային սարքավորումների սպասարկման ծախսեր	450 000
	«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի կոմունալ ծախսեր	127 500
	«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի մասնագետների տեղային մասնագիտական վերապատրաստում (հաշվապահ, համակարգչային մասնագետ, գնումների մասնագետ)	450 000

		Չնախատեսված ծախսեր	1 862 817																						
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը կկազմեն 18 483 400 ՀՀ դրամ	<table><thead><tr><th>Նկարագրություն</th><th>Նախատեսված բյուջե /ՀՀ դրամ/</th></tr></thead><tbody><tr><td>Աշխատավարձ</td><td>12 614 400</td></tr><tr><td>Ավտոմեքենաների վերանորոգման ծախսեր</td><td>529 000</td></tr><tr><td>Օրապահիկ/գիշերավարձ ՀՀ ում</td><td>1 712 500</td></tr><tr><td>Բնօգնիկ ձեռքբերում</td><td>1 300 000</td></tr><tr><td>Քաղաքների լիցքավորում</td><td>900 000</td></tr><tr><td>Համակարգիչների/ համակարգչային սարքավորումների սպասարկման ծախսեր</td><td>450 000</td></tr><tr><td>«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի կոմունալ ծախսեր</td><td>127 500</td></tr><tr><td>«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի մասնագետների տեղային մասնագիտական վերապատրաստում (հաշվապահ, համակարգչային մասնագետ, գնումների մասնագետ)</td><td>450 000</td></tr><tr><td>Գրասենյակի ընթացիկ աշխատանքների համար նախատեսված գրենական պիտույքներ</td><td>200 000</td></tr><tr><td>Գրասենյակի ընթացիկ աշխատանքների համար նախատեսված պատճենահանման և տպագրական ծախսեր</td><td>200 000</td></tr></tbody></table>	Նկարագրություն	Նախատեսված բյուջե /ՀՀ դրամ/	Աշխատավարձ	12 614 400	Ավտոմեքենաների վերանորոգման ծախսեր	529 000	Օրապահիկ/գիշերավարձ ՀՀ ում	1 712 500	Բնօգնիկ ձեռքբերում	1 300 000	Քաղաքների լիցքավորում	900 000	Համակարգիչների/ համակարգչային սարքավորումների սպասարկման ծախսեր	450 000	«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի կոմունալ ծախսեր	127 500	«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի մասնագետների տեղային մասնագիտական վերապատրաստում (հաշվապահ, համակարգչային մասնագետ, գնումների մասնագետ)	450 000	Գրասենյակի ընթացիկ աշխատանքների համար նախատեսված գրենական պիտույքներ	200 000	Գրասենյակի ընթացիկ աշխատանքների համար նախատեսված պատճենահանման և տպագրական ծախսեր	200 000
Նկարագրություն	Նախատեսված բյուջե /ՀՀ դրամ/																								
Աշխատավարձ	12 614 400																								
Ավտոմեքենաների վերանորոգման ծախսեր	529 000																								
Օրապահիկ/գիշերավարձ ՀՀ ում	1 712 500																								
Բնօգնիկ ձեռքբերում	1 300 000																								
Քաղաքների լիցքավորում	900 000																								
Համակարգիչների/ համակարգչային սարքավորումների սպասարկման ծախսեր	450 000																								
«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի կոմունալ ծախսեր	127 500																								
«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի մասնագետների տեղային մասնագիտական վերապատրաստում (հաշվապահ, համակարգչային մասնագետ, գնումների մասնագետ)	450 000																								
Գրասենյակի ընթացիկ աշխատանքների համար նախատեսված գրենական պիտույքներ	200 000																								
Գրասենյակի ընթացիկ աշխատանքների համար նախատեսված պատճենահանման և տպագրական ծախսեր	200 000																								
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն՝ - ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի - ՀՀ ֆինանսների նախարարության - ՀՀ առողջապահության նախարարության	2/8.11																						


		- ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության - երևանի քաղաքապետարանի և ՀՀ մարզապետարանների ենթակայության բժշկական հաստատությունների (պոլիկլինիկաներ, հակատուբերկուլոզային դիսպանսեր: - Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) և այլ միջազգային կազմակերպությունների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է ներկայացնել հաշվետվություններ՝ - ՀՀ առողջապահության նախարարություն և Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբին, - ՀՀ ֆինանսների նախարարությանը, - ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:


Ծրագիրը կազմեց՝

ՀՀ առողջապահության նախարարության

«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ

Հեռ. 39 42 79


Ա. Մանուկյան



10.8/10
✓



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունիսի 2012 թվականի N Մ- 452-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-90-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱ-
ՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում
դեղակայուն տուրերկույոգի կառավարման ընդլայնում»
դրամաշնորհային ծրագիր)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջա-
պահության նախարարության 2012 թվականի մայիսի 25-ի N ՍՔ/15-1/5222-12 գրությունը և
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի
31-ի N 3/3.8-1/7171-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պե-
տական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 31-ի N ԱԱ/3-4/5376-11 եզրա-
կացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարա-
րության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուրերկույոգի ու մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրա-
մի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն
անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգոր-
ծական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի «Հա-
յաստանի Հանրապետությունում դեղակայուն տուրերկույոգի կառավարման ընդլայնում»
դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-90-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյան բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմ-
բերի 30-ի N Մ-821-Ա և դեկտեմբերի 15-ի N Մ-1070-Ա որոշումների խմբագրություններով)
որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանա-
կություն՝

«Մոլտի Մեդիա-Կենտրոն Թիվի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00000139) 2012 թվականի
մարտի 20-ին կնքված՝ N ԲԸԱՀ -ԾՁԲ-12/1 պայմանագրում նշված գործարքը, որով նախա-
տեսվում է տուրերկույոգի դեմ պայքարի միջազգային օրվան նվիրված «Առողջության
պատմություն» հաղորդաշարի շրջանակներում հեռուստահաղորդման նկարահանման և
հեռարձակման ծառայությունների մատուցում՝ 500000 դրամի չափով՝ առանց ավելացված
արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ - ՄԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունիսի 2012 թվականի N Մ- 453
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N Մ-318-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (Առաքելություն Արևելք» միջազգային
օգնության հայաստանյան մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 22-ի N 3/3.8-1/6772-21 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 24-ի N ԱԱ/3-4/4982-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 7-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին, փուլ 1» ծրագրի մասին» N Մ-318-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-738-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կոմայուտեր Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02508699) 2012 թվականի մայիսի 10-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային տեխնիկայի ձեռքբերում՝ 5811560 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

08 հունիսի 2012 թվականի N Մ-454
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ- 228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետություն-
նում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»
դրամաշնորհային ծրագիր) (1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության 2012 թվականի մայիսի 7-ի N 3/3.8-2/5880-12, Հայաստանի Հանրա-
պետության առողջապահության նախարարության 2012 թվականի մայիսի 17-ի N ՀՔ/
22/ 4734-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 7-ի N ԱԱ/3-6/4130-12 եզրակացությունները,
ո Ր Ո Շ Մ Ա Մ է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարա-
րության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված «Հայաստանի Հան-
րապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրա-
պետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) հասցեով
ստացված բեռը (դեղեր՝ Լամիվուդին 10մգ/5մլ, 240մլ - 80 տուփ, Նևիրապին 50մգ/5մլ,
240մլ - 50 տուփ, Զիդովուդին 50մգ/5մլ, 240մլ - 20 տուփ 7 տեղ, 58 կգ քաշով, 287.5 ԱՄՆ-ի
դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 14607 հնդկական ռուպի, «Զվարթնոց»
մ/տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրա-
գրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրա-
պետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամա-
շնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԿԱԾ



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ


08 հունիսի 2012 թվականի N Մ-455
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ- 228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետություն-
նում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»
դրամաշնորհային ծրագիր)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության 2012 թվականի մայիսի 7-ի N 3/3.8-2/5886-12, Հայաստանի Հան-
րապետության առողջապահության նախարարության 2012 թվականի մայիսի 17-ի N ՀՔ/
22/4733-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 8-ի N ԱԱ/3-6/4165-12 եզրակացությունները,
որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարա-
րության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված «Հայաստանի Հան-
րապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրա-
պետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) հասցեով
ստացված բեռը (դեղեր՝ Ավոկոմբ 150մգ/300մգ, N 60 - 933 տուփ, Ավոլամ 150մգ, N60 - 63
տուփ, Նևիպան 200մգ, N 60 - 950 տուփ, Ավիրանգ 200մգ, N 90 - 22 տուփ 24 տեղ, 172 կգ
քաշով, 10033.97 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 88586 հնդ-
կական ռուփի, «Զվարթնոց» մ/տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառա-
վարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի
մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային
ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշմամբ հաս-
տատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ - ՄԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵՑՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
08 հունիսի 2012 թվականի N Մ- 456-Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ
ԹՅԱՆ ԿՈՐՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵ-
ՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶԿԱՆՈՎԱԾՑԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐԴՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության 2012 թվականի մայիսի 18-ի N 3/3.8-1/6587-12, Հայաստանի Հանրապե-
տության արդարադատության նախարարության 2012 թվականի մայիսի 17-ի N 02/2953-12,
Հայաստանի Հանրապետության փրաձեցային կառավարման նախարարության 2012 թվա-
կանի մայիսի 23-ի N 7/16/2673-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 18-ի N ԱԱ/3-4/4725-12
և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի մայիսի 24-ի
N 01/15/2141-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական
կազմակերպության (ՀՀ, քաղ. Գյումրի, Սարգսյան փող., 3-րդ նրբ., տուն 8, ՀՎՀՀ՝ 5514397)
կողմից իրականացվող՝ 2854000 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետու-
թյան Գեղարքունիքի մարզի Չկալովկայի համայնքի ջրամատակարարման ներքին ցանցի
վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպա-
տակով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կող-
մից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրակա-
նացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արխտեխ-շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536243) 2012 թվականի մայիսի 4-ին կնքված՝
N 100/MP135/12/07/1 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախա-
տեսվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Չկալովկա գյուղում խմե-
լու ջրի ջրագծերի անցկացման աշխատանքների իրականացում՝ 2854000 դրամի չափով՝
առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ ծրա-
գրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապե-
տության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներ-
կայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաս-
տանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հա-
յաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:



Ա. ՏԵՐ - ՄԻՄՈՆՅԱՆ





«ՀՀ Գեղարքունիքի մարզի Չկալովկա համայնքի ջրամատակարարման ներքին ցանցի վերակառուցում»
ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	Իրականացնել գյուղի 1250 գծ/մ երկարությամբ խմելու ջրագծի վերակառուցման աշխատանքներ Գեղարքունիքի մարզի Չկալովկա գյուղում:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ստանալ Ավելացված Արժեքի Հարկից ազատման արտոնություն
3	Բարեգործը	Կարիտաս Իտալիա Via Aurelia 796 00165 Roma, ITALIA
4	Ծրագիրը կատարողը	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Գեղարքունիքի մարզ, գյուղ Չկալովկա բնագավառը՝ բարեգործական ջրամատակարարում
6	Ծրագրի բյուջեն	2,854,000 դրամ առանց ԱԱՀ-ի
7	Բարեգործություն ստացողը	Գեղարքունիքի մարզի Չկալովկա գյուղի համայնքը
8	Ծրագրի իրականացման տևողությունը	3 մայիս, հունիսի 1, 2012թ.- օգոստոսի 31, 2012թ.
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրով նախատեսված է 1250 գծ/մ - d=50 մմ սինթետիկ խողովակաշարի մոնտաժում, 3 դիտահորի կառուցում, ճյուղային և գլխամասային միացումներ: Ծրագիրը նախատեսված է իրականացնել 2012թ. հունիս-օգոստոս ամիսներին: Ծրագրի շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը կազմում է 3.805.000 (երեք միլիոն ութ հարյուր հինգ հազար) դրամ, որից 951.000 դրամը՝ համայնքային ներդրում: Գումարը, որի համար դիմում ենք ԱԱՀ-ից ազատելու համար, կազմում է 2.854.000 դրամ:

8/8

10	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ձեռք կբերվեն 1250 գծ/մ - d=50 մմ սինթետիկ խողովակ, ձևավոր մասեր, ավազ, ցեմենտ: Կօզտագործվի տարբեր տեսակի շինտեխնիկա, մասնագիտական և բանվորական աշխատանք: Ծառայությունները կմատուցվեն կապալառու «Արխտեխշին» ՍՊԸ-ի կողմից: Պայմանագրի արժեքը կազմում է 2.854.000 դրամ առանց ԱԱՀ-ի:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չկան:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի մասին պաշտոնական նամակով կտեղեկացվի Գեղարքունիքի մարզպետարանին: Ամփջական համագործակցություն կիրականացվի գյուղական համայնքապետարանի, «Հայ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ Հարավային մ/ճ Գավառի տեղամասի, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ:
13	Ծրագրի կատարմանը անհրաժեշտ վերահսկողության մեխանիզմները և նկարագրությունը	Ծրագրի իրականացման վերահսկողությունը կիրականացնի Հայկական Կարիտաս ԲՀԿ Կարչական Խորհուրդը: Մարզպետարանը, «Հայ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ Հարավային մ/ճ Գավառի տեղամասն ու համայնքապետարանն ազատ են ընտրել ու կիրառել վերահսկողության իրենց մեխանիզմները: Ծրագրի ավարտին հաշվետվություն կներկայացվի Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովին:



8/8



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
8 հունիսի 2012 թվականի N Մ- 457
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՈՒՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 1-ի N 3/3.8-2/7241-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի մայիսի 29-ի N ՀՔ/22/5300-12, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2012 թվականի մայիսի 25-ի N 1/02.3/1428-12, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի 2012 թվականի մայիսի 29-ի N 02-Մ-38 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 29-ի N ԱԱ/3-6/5242-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետ տեխնիկական համագործակցության ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (արհեստական ռադիոակտիվ իզոտոպ՝ տեխնեցիումի գեներատոր (Tc99m), 1 տեղ, 17 կգ ընդհանուր քաշով, 858 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 315.3 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
08 հունիսի 2012 թվականի N Մ- **458-Ա**
քաղ. երևան

**«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ
ԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԳԻ ՑՈՂԱՄԱՐԳԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 18-ի N 3/3.8-1/6588-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մայիսի 17-ի N 02/2952-12, Հայաստանի Հանրապետության փորձաքային կառավարման նախարարության 2012 թվականի մայիսի 23-ի N 07/16/2672-12, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 18-ի N ԱԱ/3-4/4726-12, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի մայիսի 18-ի N 01/2117-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Գյումրի, Սարգսյան փող., 3-րդ նրբ., տուն 8, ՀՎՀՀ՝ 5514397) կողմից իրականացվող՝ 2178000 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ցողամարգի համայնքի ջրամատակարարում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արխտեխ-շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536243) 2012 թվականի մայիսի 4-ին կնքված՝ N 102/MP137/12/07/1 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ցողամարգ գյուղում խմելու ջրի ջրագծերի անցկացման աշխատանքների իրականացում՝ 2178000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապե-

տության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:



Ս. ՏԵՐ - ՄԻՄՈՆՅԱՆ



«Հայկական Կարիտաս» բարեգործական հասարակական կազմակերպության
Գործադիր Տնօրեն Անահիտ Մխոյանի կողմից



ՀԱՍՏԱՏՎԱԾ է
«04» մայիսի 2012թ.

«ՀՀ Շիրակի մարզի Ցողամարգ համայնքի ջրամատակարարում»
Ցողմարգ

1	Ծրագրի նպատակը	Իրականացնել գյուղի 1300 գծ/մ երկարությամբ խմելու արտաքին սնուցող ջրագծի կառուցման աշխատանքները Շիրակի մարզի Ցողամարգ գյուղում:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ստանալ Ավելացված Արժեքի Հարկից ազատման արտոնություն
3	Բարեգործը	Կարիտաս Իտալիա Via Aurelia 796 00165 Roma, ITALIA
4	Ծրագիրը կատարողը	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Շիրակի մարզ, գյուղ Ցողամարգ բնագավառը՝ բարեգործական ջրամատակարարում
6	Ծրագրի բյուջեն	2 178 000 դրամ առանց ԱԱՀ-ի
7	Բարեգործություն ստացողը	Շիրակի մարզի Ցողամարգ գյուղի համայնքը «Շիրակ –ջրմուկոյուղի» ՓԲԸ
8	Ծրագրի իրականացման տևողությունը	3 ամիս, հունիսի 1, 2012թ.- օգոստոսի 31, 2012թ.
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագիրը նախատեսված է 1300 գծ/մ - d=63 մմ սինթետիկ խողովակաշարի մոնտաժում, դիտահորի կառուցում, գլխամասային և ճյուղային միացումներ: Ծրագիրը նախատեսված է իրականացնել 2012թ. հունիս – օգոստոս ամիսներն: Ծրագրի շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը կազմում է 2.178.000 դրամ:

6/8

10	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ձեռք կբերվեն 1300 գծ/մ - d=63 մմ սինթետիկ խողովակ, ձևավոր մասեր, ավազ, ցեմենտ: Կօգտագործվի շինտեխնիկա, մասնագիտական ու բանվորական աշխատանք: Ձեռք բերվող ապրանքների, ինչպես նաև ծառայությունների գինը կազմում է 2.178.000 դրամ առանց ԱԱՀ-ի: Ծառայությունները կմատուցվեն կապալառու «Արխտեխնիկ» ՍՊԸ-ի կողմից:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չկան:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի մասին պաշտոնական մամուլով կտեղեկացվի Շիրակի մարզպետարանին: Անմիջական համագործակցություն կիրականացվի գյուղական համայնքապետարանի, «Շիրակ-ջրմուկոյուղի» ՓԲԸ-ի, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման վերահսկողությունը կիրականացնի Հայկական Կարիտաս ԲՀԿ Վարչական Խորհուրդը: Մարզպետարանը, համայնքապետարանն ու «Շիրակ-ջրմուկոյուղի» ՓԲԸ-ն ազատ են ընտրել ու կիրառել վերահսկողության իրենց մեխանիզմները: Ծրագրի ավարտին հաշվետվություն կներկայացվի Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովին:



6/9



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


**08 հունիսի 2012 թվականի N Մ- 459
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N Մ-048-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱ-
ՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/
ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»
դրամաշնորհային ծրագիր)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության առողջա-
պահության նախարարության 2012 թվականի մայիսի 24-ի N ՍԲ/15-1/5216-12 գրությունը,
ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 20-ի «Հայաստանի Հանրա-
պետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
2010 թվականի մայիսի 3-ի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից
գործարքների մասին (Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի
ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) N Մ-048-Ա որոշման 11-րդ
կետում «գրասենյակային կահույքի ձեռքբերում» բառերը փոխարինել «դեղերի ձեռքբե-
րում» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 հունիսի 2012 թվականի N Մ-460
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 24-ի N3/3.8-2/6869-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի մայիսի 17-ի N ՀՔ/22/4740-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 16-ի N ԱԱ/3-6/4610-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի որոշման 11-րդ կետում «հագուստի, սննդի, գրասենյակային պիտույքների, հիգիենայի պարագաների և այլ ապրանքների ներմուծում ու անհատույց տրամադրում անապահովներին» բառերը փոխարինել «հագուստի, կոշիկի, սննդի, գրասենյակային պիտույքների, հիգիենայի պարագաների, բուժարքավորումների, դեղորայքի, կենցաղային պարագաների, դպրոցական գույքի և այլ ապրանքների ներմուծում ու անհատույց տրամադրում անապահովներին» բառերով:

2. Սահմանել, որ Միացյալ հայկական հիմնադրամի կողմից Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ուղարկված բեռը (2 տեղ, 497 կգ ընդհանուր քաշով, 14351.85 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, իսկ բեռնափոխադրման ծախսերը կազմում են 4116.25 եվրո, «Ձվարթնոց» Ս/Տ) ներմուծվում է սույն որոշման 1-ի կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
8 հունիսի 2012 թվականի N Մ - 461
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-774-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2012 թվականի հունիսի 6-ի N 3/3.8-1/7229-12 և
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտեի 2012 թվականի մայիսի 31-ի N ԱԱ/3-4/5410-12 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի
մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով
նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Հայ ավետարանչական ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում»
ծրագրի մասին» N Մ-774-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա
համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2012 թվականի
մայիսի 15-ին կնքված N 5485 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է
էլեկտրական ցանցի միացման աշխատանքների իրականացում՝ 3213333 դրամի չափով,
առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2012
թվականի մայիսի 15-ին կնքված N 5491 պայմանագրում նշված գործարքը, որով
նախատեսվում է էլեկտրական ցանցի միացման աշխատանքների իրականացում՝ 3696840
դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԾ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 հունիսի 2012 թվականի N Մ - 462 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մայիսի 21-ի N 3/3.8-1/6687-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 21-ի N ԱԱ/3-4/4849-12 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արդա Կոնստրաքշն Թի ընդ Թի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01011141) 2012 թվականի ապրիլի 27-ի պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նորոգման աշխատանքների կատարում՝ 14575000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
19 հունիսի 2012 թվականի N Մ- **463**-Ա
քաղ. երևան
(Որոշումն ընդունվել է 2012 թվականի հունիսի 8-ին)

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-
ԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏՆԱՅԻՆ ԽՆԱՄՔ ԾԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության 2012 թվականի մայիսի 29-ի N 3/3.8-1/7062-12, Հայաստանի Հանրապե-
տության արդարադատության նախարարության 2012 թվականի մայիսի 18-ի N 02/2980-12,
Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության
2012 թվականի մայիսի 18-ի N ՖԲ/ԱՆՄ-5/3556-12, Հայաստանի Հանրապետության կառա-
վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մայիսի 29-ի
N DDԲԸ-88B2-63E1, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի
մայիսի 22-ի N 01/2230-12 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2012 թվա-
կանի մայիսի 24-ի N 101/104.3/2836-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական
կազմակերպության (ՀՀ, քաղ. Գյումրի, Սարգսյան փող., 3-րդ նրբ., տուն 8, ՀՎՀՀ՝ 5514397)
կողմից իրականացվող՝ 334674 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «Տնային
խնամք ծերերի համար» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատա-
կով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից
կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականաց-
ման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վեկար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00082994) 2012 թվականի ապրիլի 16-ին կնքված՝
N 000028 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի արտա-
դրության «Chevrolet Niva 212301» մակնիշի ավտոմեքենայի ձեռքբերում՝ 6150000 դրամի
չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ ծրա-
գրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապե-




տության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Շիրակի և Լոռու մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության
Գործադիր Տնօրեն Անահիտ Մխոյանի կողմից
«01» մայիսի 2012թ.


«Տնային խնամք միայնակ ծերերի համար»

ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Տնային խնամք և տնային հոգածություն միայնակ տարեցների նկատմամբ ծերերին խնամքի և կանոնավոր տնային այցերի միջոցով, նրանց կենսապայմանների բարելավում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է օրենքով սահմանված կարգով ստանալ Ավելացված Արժեքի Հարկից ազատման արտոնություն
3.	Բարեգործը	Կարիտաս Գերմանիա՝ Karlstraße 40, D-79104 Freiburg, Deutschland Կարիտաս Իսպանիա՝ San Bernardo, 99 bis, E-28015 Madrid, Spain ԱՄՆ «Կաթողիկե Եպիսկոպոսների համագումար»՝ NC/AEE 3211 4th Street, NE, Washington, DC 20017
4.	Ծրագիրը կատարողը	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ Գյումրի, Հ.Սարգսյան 3 նրբ., 8 տուն ՀՎՀՀ 05514397
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Շիրակի և Լոռիի մարզերի թվով 240 միայնակ ծերեր: բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	334.674 Եվրո (1 տարվա համար՝ 119058 Եվրո, 2 տարի՝ 107808 Եվրո, 3 տարի՝ 107808 Եվրո), որից Կարիտաս Գերմանիա՝ 180.000 Եվրո, Կարիտաս Իսպանիա՝ 143.424 Եվրո, ԱՄՆ «Կաթողիկե Եպիսկոպոսների համագումար»՝ 11.250 Եվրո
7.	Բարեգործություն ստացողը	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ «Տնային խնամք միայնակ ծերերին» ծրագրի 240 շահառու (140 միայնակ ծեր Գյումրիում, 100-ը՝ Վանաձորում)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	3 տարի, հունվար 2012թ.- դեկտեմբերի 31, 2014
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի նպատակն է ծերերին խնամելը և կանոնավոր տնային այցերի միջոցով նրանց կենսապայմանների բարելավելը՝ բուժօգնություն տրամադրելով, օգնելով անձնական հիգիենայի պահպանմանը, տնային գործերի և այլ էական ծառայությունների կատարմանը: Ամիսը մեկ անգամ տարեցներին հում սննդի փաթեթ է տրամադրվում: Ծրագիրը 2006 թ-ից հանրային հեռուստատեսությամբ տեսահոլովակների միջոցով

		աշխատանքներ է տանում, որպեսզի հանրային իրազեկությունը միայնակ ծերերի, նրանց կենսակերպի և կարիքների վերաբերյալ բարձրանա: Ներկայումս օժանդակություն են ստանում 140 տարեց Գյումրիում, 100-ը՝ Վանաձորում : Ծրագրի ընդհանուր արժեքն է 334.674 Եվրո, որից 268.714 Եվրոն ծրագրին վերաբերվող ծախսերն են, իսկ մնացած 65960 Եվրոն՝ կազմակերպական:
10	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի բյուջեն կազմում է (Եվրոյով) 1. Մարդկային ռեսուրսներ ըստ ծրագրի՝ 89.312 2. Սննդի բաշխման համար մեքենայի շահագործման և բենզինի ծախս՝ 28.560 3. Նյութական ռեսուրսներ (սննդի և հիգիենիկ պարագաների գնում ծերերի համար)՝ 107.033 4. Գրասենյակային ծախսեր՝ 20.440 5. Հանրային իրազեկման նյութեր՝ 4.800 6. Ծերերի ժամանցի կազմակերպում՝ 13.400 7. Դասընթացներ բուժքույրերի և սոց.աշխատողների համար՝ 3.200 8. Աշխատավարձ՝ 35.520 9.Անուղղակի ծախսեր (միայնակ ծերերի թաղման կազմակերպում, անհրաժեշտ պարագաների ձեռքբերում և առաքում, հրատապ դեպքերում խնամք ապահովող անձանց տեղափոխում Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում, ինչպես նաև Երևանում, հումանիտար օգնության տեղաբաշխում, շահառուներին պետական կառույցներ և առողջապահական կենտրոններ ուղեկցում և օժանդակ ծառայությունների մատուցում, անհապաղ առողջապահական միջամտությունների կազմակերպում, և այլն)՝ 21.159 Ընդամենը՝ 323.424 Եվրո:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպական ծախսերը կազմում են 77.210 Եվրո՝ 1. Ծերերին սպասարկող մեքենայի գնում Նիվա Շեվրոլե: /Ծրագրի ավարտից հետո մեքենան կծառայի նմանատիպ բարեգործական ծրագրերի համար/ 11.250 (առանց ԱԱՀ) 2. Գրասենյակային ծախսեր՝ 20.440 Եվրո 3. Աշխատավարձ՝ 35.520 Եվրո 4. Անուղղակի ծախսեր՝ 10.000 Եվրո Մեքենան կգնվի «Վեկար» ՍՊԸ-ից (ներփակ գտեք պայմանագիրը):
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ	Անմիջական համագործակցություն կիրականացվի Շիրակի մարզի Առողջապահության բաժնի, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական

	կազմակերպությունների հետ	ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման վերահսկողությունը կիրականացնի Հայկական Կարիտաս ԲՀԿ Վարչական Խորհուրդը: Ծրագրի ավարտին հաշվետվություն կներկայացվի Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովին:



✓